

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
Organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 9-10  
SEPTE.-OCTOB.  
1932  
PARIS (France)

## «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՑՐԳԱՆ

### „ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ “

Այս ժարի, մեր բոլոր մարմիններն ու շարքերը բացառիկ շուքով մը պէտք է տօնեն Դաշնակցութեան Օրը, որ մեր կուսակցական կեանքի անբաժան մասը կը կազմէ 1925էն ի վեր:

Բացառիկ, անոր համար որ, արդէն լրացաւ մեր բռնի պանդխտութեան առաջին տասնամեակը, եւ ահա կը գտնուինք նոր շրջանի մը առջեւ, տասն անգամ աւելի մտայլ եւ ծանրակշիռ:

Ինչպէս միշտ, այս տարի ալ, Դաշնակցութեան Օրը չպիտի համարուի միայն անցեալ փառքերու եւ արդար հպարտութեան հանդիսաւոր տօն մը, այլ եւ ներշնչելու եւ պատասխանատուութեան գիտակցութեամբ խորանալու պատեհութիւն մը:

Բայց մանաւանդ այս տարի, մեր բոլորին պարտքը պիտի ըլլայ ոչ միայն շարքերը, այլ եւ մեզ շրջապատող Դաշնակցութեան խօսքին ու գործին հաւատացող բազմութիւնները տողորկի նոյն պիտակցութեամբ եւ մղել զանոնք ինքնազործունէութեան:

Որովհետեւ — գաղտնիք չէ, ընկերներ — կը գտնուինք հայ ժողովուրդի պատմութեան ամենէն ճակատագրական մէկ շրջանին մէջ:

Շատ ենք ունեցեր զարհուրելի, աշխարհաստան փոթորիկներ՝ մեր ժամանակակից պատմութեան ընթացքին: Յաճախ անդունդին արին է հասած մեր ժողովուրդը, ինչպէս, վերջին անգամ, 1915—1918ին:

Բայց, այդ բոլոր տեղի կունենային հայրենի հողերու վրա: Եւ, եթէ մարդիկը չզօրէին, լուսներն ու դաշտերը բաւական էին հրաշքներ գործելու եւ փրկութեան գօտիներ ընծայելու:

Հայաստանի երկինքն ու երկիրը ուժ եւ թռիչք, հաւատք եւ կամեցողութիւն կը ներարկէին, ի դերեւ հանելու համար աշխարհի բոլոր թշնամիներուն դաւերն ու սաղբանքները:

Այսօր — ահա տասը տարիէ ի վեր — կը գտնուինք օտար հողի վրա: Օտար՝ իր հողով եւ ջուրով: Օտար՝ իր կարգ ու սարքով եւ մշակոյթով: Օտար՝ մինչեւ իսկ իր զգացումներով:

Հայոց պատմութիւնը քիչ է արձանագրած այսպիսի օտարութիւն-պանդխտութիւն: Ամբողջ երկրամասի մը — Թուրքիոյ — հայ ժողովուրդին վերջին մնացորդը ցիր ու ցան՝ ի սփռուս աշխարհի: Մովկերէ ծով: Տարողւած՝ բոլոր այն ցամաքներուն վրա ուր մարդկային համայնքներ կան:

Աւելի քան կէս միլիոն զանգւած մը փշուր փշուր նետուած՝ Հիւսիսային ծովէն մինչեւ Սաղաղապահան, լայնքին ու երկայնքին: Եւ զրուկուած՝ տարրական իրաւունքներէ: Հալածական՝ պատան մը անցի համար. գուրկ նոյն իսկ երթեւեկի սարքական ապտութեմէ...

Յետոյ, իր աչքին առջեւ իսկ, օտարացումը՝ նոր սերունդի: Սաթարում՝ ազգային դիմագծի եւ բազմազան առաքինութեանց որ կը ծաղկէին հայրենի երկինքին տակ:

Մէկ խօսքով, հալու մաշ՝ սեփական հայրենիքի կարօտէն: Եւ ուրեմն ենթակայ՝ բոլոր հիզօրներու եւ դաւադիրներու հարւածներուն...

Իբրեւ Դաշնակցական, այս մտայլ պատկերին ալ պիտի նայինք այնպէս ինչպէս վայել է հուրով եւ սուրով մկրտուած յեղափոխականին:

Հեռու մեզմէ՝ որեւէ շարում կամ ընկրկումս Այդ պիտի նշանակէր ուրացումը, անուազն թուլացումը մեր կուսակցական առաքինութեանց:

Ընդհակառակն, աւելի եւ աւելի հաւատք եւ կորով, շեշտակի դիմադրութեամբ սպառնացող վտանգին: Ինչպէս, երէկ, Փէտսային կը նայէր իր կուրծքին ուղղւած կրակին:

Իսկ այս կը պահանջէ՝ յարածուն գործունէութիւն: Յարատեւ պայքար՝ ինքնապաշտպանութեան համար:

Մեր ձեռքը չէ Հայաստանի ժողովուրդին ճակատագիրը վարել այնպէս ինչպէս կը պահանջեն մեր ազգային գերագոյն շահերը: Գտնելով հայրենի հողի վրա, այդ ժողովուրդը, գոնէ մէկ տեսակետով, բարտաւար պիտի համարէ ինքզինքը, հակառակ դատան կարգ ու սարքի մը սարսափներուն:

Բայց մեր ձեռքն է, կարելի եղածին չափ ապահովել պանդուխտ բազմութեանց ինքնապահպանումը՝ ամբաստանելով անոնց դիմադրական կորովը: Կանգնելով անոնց կողքին, ամէն տեղ ուր որ կը հասնի մեր ուժը: Վառ պահելով, անոնց գլխուն վերեւ, հայրենիքի եւ ազատութեան դադափարը:

Այս բոլորը կը պահանջեն ուժ եւ գործունէութիւն: Կուռ, ծաւալուն կազմակերպութիւն եւ գործօն աշխատանք:

Ահա կենդանի նշանախօսք մը, Դաշնակցութեան Օրուան առթիւ:

Նշանախօսք մը, որ նորութիւն չէ Դաշնակցութեան համար, բայց, հանդիպելով ճակատագրական շրջանի մը, պէտք է ստանայ նոր ուժ եւ հրատապ այժմէութիւն:

Ուրեմն, մեր առաջին մտահոգութիւնը պիտի ըլլայ, խտացնել, սուտարացնել շարքերը, բազմապատկել կազմակերպւած ուժը:

Որքան աւելի տարածուն, կուռ եւ հզօր, այնքան աւելի ազդու: Այնքան աւելի ընդունակ՝ արդիւնաւորապէս ծառայելու հայրենիքին եւ գաղութներուն: Մայր-կուճղին եւ անոր արժատախիլ ճիւղերուն:

Մեզ չպիտի թմրեցնէ ոչ մեր անցեալը, ոչ ալ մեր շուրջը, մեր դրօշին տակ համախմբւած պատկառելի ուժը:

Բոլոր ժողովուրդները, ճիշտ այս միջոցին, հեղհեղեղ աւելի կը հակին դէպի պատրաստութիւն եւ կազմակերպութիւն:

Հորիզոնը մտայլ է բոլորին համար ալ, եւ վա՛յ անոր որ, պատրաստ չի գտնելի վճռական ժամուն: Կամ, կը ներկայացնէ թերի պատրաստութիւն, կիսկատար ուժ, թոյլ եւ վախաշարքեր:

Մենք չունինք բանակ եւ նաւատորմ: Բայց, ինչ որ ունինք, իբրեւ կազմակերպւած ուժ, անամ՝ քառասուն տարուն անընդհատ պայքարով եւ զոհաբերութեամբ, կրնայ, վճռական պահուն, ճակատիլ բռնութեանց դէմ:

«Ճէտախիլ»ները լեռնէն իջած են այսօր, եւ իջած են օտար, բոլորովին խորթ արեւու վրա: Բայց քանի ունինք անոնց ոգին, եւ քանի ճիշ թափենք բազմապատկելու մեր թիւը, համատարած, խիտ ցանցի մը մէջ ամփոփելու բոլոր ընդունակ սարքերը, այնքան աւելի ուժ կունենանք տոկալու տարագրութեան դառն տագնապին ալ:

Երկունքի մէջ է բովանդակ աշխարհը: Այսօր աւելի քան երբեք:

Ինչ որ յօրինւեցաւ եւ սարքւեցաւ իբրեւ վերջնական հաշւեյարդարը Մեծ Պատերազմին, կը ճարճատի օրէ օր: Վաղը՝ խնդրական է, հարցական է բոլորին համար ալ: Պիտի ապրին ու յաղթեն անոնք որ կը տոկան, կը կազմակերպուին, կը գործեն: Ու մանաւանդ անոնք որ, կը հաւատան իրենց ճակատագրին, եւ կազմ ու պատրաստ կը սպասեն՝ տիրաբար վարելու գայն:

Դաշնակցութեան Օրը թող դառնայ հաղորդութեան օր մը՝ մեր բոլոր ընկերներուն եւ համակիրներուն համար, նոր հաւատքով եւ աւելի վճռական կամեցողութեամբ կապելու մեր կուսակցութեան աւանդներուն, անվհատ եւ հաստատակամ հետապնդելու մեր հիմնական առաջգրութիւնը, — հայրենիք եւ ազատութիւն:

# ՀԱՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ

Հայկական կեանքի դժբախտ ու դժխեմ իրականութիւններէն մին է այն փաստը, թէ դարերէ ի վեր հայութիւնը և Հայաստանցիութիւնը հասկացողութիւնները չեն հանդիսացած նոյնիմաստ, սերտօրէն կապակցուած, անբաժանելի գաղափարներ: Ատոր պատճառները բազմաթիւ են ու բազմապիսի, ներքին ու արտաքին, բայց փաստը կը մնայ փաստ: Ընդհակառակը, պատմական Հին շրջաններէն սկսեալ մինչև այժմ աշխարհի չորս ծագերուն սփռուած բերաւոր Հայեր, հայկական Հոծ գաղթականութիւններ, Հոս Հոս առանձին կղզիներ ձևացնող Հայութիւններ գոյութիւն ունեցեր են, որոնք Հայաստանցիներ չեն եղած, և եթէ ծնած ալ են ոճանք քնաշխարհէն մէջ, Հոս չեն ապրած, տքնած ստեղծագործած ու գերեզման մտած, այլ այն օտար վայրերու մէջ, ուր նետեր է կեանքը դիրենք:

Այսօր ալ Հայ ժողովուրդի մէկ խոշոր տոկոսը դուրսն է իր Հայրենիքէն, տարողուած երկրագունդի չորս հողերուն: Եւ ձմալ կղզիէն մինչև Պուէնտո Այրէս, Ֆրէզոն մինչև Թեհրան, Պերիլէն մինչև Աթէնք, Պոսթընէ մինչև Գարիէ կան Հազարաւոր ամէն խաւի ու դասակարգի ճշտականող Հայեր, Հին ու նոր ժամանակներու մէջ տեղադրուած, որոնք որքան ալ մտածողութեամբ, ապրումներով, կրօնքով, լեզուով, բարքերով Հայ են, այսուհանդերձ Հայաստանցի չեն և իրենց մտքէն, բողոքէն, սրտէն բխած Հարստութեանը, աշխատանքին, քրտինքին, ստեղծագործութեան, նոյն իսկ տառապանքին ու երջանկութեան ամսան կը մնայ Հայաստան երկիրը: Ասոնց անհատական կամ Հաւաքական ընդունակութիւններն ու ճիշդը Հայրենի հողին վրա չէ որ կարողանաւորին, սոսնց ազգային հանճարը քնաշխարհէն մէջ չարտայայտիր. սոսնց արիւն-քրտինքը Հայրենի դաշտի վրա չէ հոսեր:

Այս դժբախտ փաստը գրեթէ արանձնաբանութիւն է միայն մեր պատմութեան, եթէ նկատի չունենանք հրեաներու կեանքը, որ բոլորովին տարբեր ու բացառիկ է:

Մեզմէ դուրս, անգլիական, Փրանսական, գերմանական, իտալական, ռուսական, ամերիկեան և այլ ազգութիւն ու պետութիւն հասկացողութիւնները անբաժանելիօրէն, սերտօրէն, սեղօրէն, ներքին անբաժանելի կապերով ազգացած են անգլիացի, Փրանսացի, գերմանացի, իտալացի, Ռուսացի, ամերիկացի բնութեաններուն հետ: Անգլիացին ոչ միայն ծագումով, ցեղային արիւնով, աւանդութիւններով, պատմութեամբ, լեզուով, բարքերով, կրօնքով անգլիական ստրութեան մէջ անդամն է, այլ նաև անգլիական երկրի բնակիչն է, Հոս ապրող, տքնող, ստեղծագործող ու մեծնող մարդն է: Անոր միտքը, բազուկը, հոգին կ'երկեն ու կարողանան անգլիական կղզիներ վրա և կապուցնեն անոր ազգային մշակութիւնը — բառին ամենայն առումով: Անոր շահէն, վատտակէն, մտածումէն, ապրումէն կ'զուտի երկիր-բնակավայրը: Անոր շինածը կը

մնայ երկիրն. անոր յղացածը կը յարստէ Հայրենիքին մէջ: Անհատը, որ անցաւ որ այս աշխարհի վրա, անհետանալէ ետք սերունդը կը յարստէ, գործը կը մնայ ու կը բարգաւաճի:

Նոյնը ճշմարիտ է բոլոր մեծ ու փոքր ազգ-պետութեանց համար, բացի միայն հրեական ազգութիւնէն, որ դարերէ ի վեր կտրուած, հեռացած է իր խաբսիսէն և, թէև հրեա, այսօր կապրի որպէս Փրանսացի, ամերիկացի, անգլիացի կամ գերմանացի, նայած թէ ո՞ր երկրին մէջ է տեղադրուած:

Ի Հարկէ, կան բազմաթիւ անգլիացիներ, ինչպէս նաև ուրիշ ազգ-պետութեանց պատկանող քաղաքացիներ, որոնք հեռացած իրենց քնաշխարհէն, կապրին օտար հողերուն: Իսկ: Բայց սոսնց բոլորը պարզապէս թեւերը, օղակներն են մայր երկրի դուրսը արձակած ճիւղաւորներուն: Տնտեսական, առևտրական, քաղաքական, գիւտարական, մտաւորական, կրթական և այլ անհատներ կողմը կը տղեն դիրենք մայր Հայրենիքին, որ քնաշխարհը ըլլալէ երբեք չի դադարիր: Անոնք դուրսն են իր պաշտօններու, առևտրական գործակալ, բողոք, թղթակից և այլն, որովհետև անոնց դուրսը զլրալէն շահ ունի Հայրենիքը: Անոնց վատտակը չէ կորուսած, քրտինքը միայն օտար երկրին ի սպաս չէ դրած: Անգլիացին, Փրանսացին, գերմանացին կամ իտալացին օտար աշխարհներու մէջ անգլիական, Փրանսական, գերմանական կամ իտալական երկիրներուն է որ կը ծառայէ գլխաւորաբար: Եթէ անոնց վատտակէն օտար երկրին ալ կ'օգտուի, առկէ մնաս չկայ մայր Հայրենիքին: Եւ օր մը պիտի վերադառնան. անոնց գրեցիութիւնը ժամանակաւոր է, որով առաջելութեամբ և կամաւորապէս ստանձնուած, ոչ թէ բռնիօրէն քշուած ու Հայրենիքի դռները իրենց վրա փակ՝ ինչպէս մերն է:

Այն անգլիացիները, որոնք մշտնջենապէս հեռացած են իրենց մայր հողէն և տեղադրուած-Հառատուած օտար ափերու վրա, այլ ևս նոյն արժէքը չեն Անգլիոյ համար: Մ. Նահանգներու բնակիչները, որոնք ծագումով, լեզուով, բարքերով ճշտող մեծամասնութեամբ անգլո-սաքսոն են, այլ ևս անգլիացի չեն, այլ ամերիկացի. կամ Աւստրալիոյ ու նոր Զելանդիոյ մէջ տեղադրուած անգլիացի իր արժէքով, օգուտով, վատտակով նոյնը չէ անգլիական ազգ-պետութեան համար ինչ որ անգլիական կղզիներ վրա ապրող անգլիացին, որքան ալ առաջինը հարկը տուիս առկէ անգլո-սաքսոն ըլլայ, քան, օրինակ, լոնտոնցի:

Հայրենիքի մէջ ապրելը, այսինչ երկրացի ըլլալը առաջնակարգ ազդակ է՝ ունի պետութեան շահի տեսակետէն: Անգլիներն իսուել կամ բողոքական ըլլալը դեռ բաւական չէ անգլիացի ըլլալու համար, կամ Փրանսերէն իսուել ու կաթոլիկ ըլլալը Փրանսացի ըլլալու համար: Երկրի, հողի բնութեամբ առաջ նշանակութիւն ունի ազգութեան մը պատկանելիութեան մէջ

և հայրենիքը ազգութիւնը բնորոշող մեծագոյն, կարեւորագոյն, sine qua non ստորոհելիքն է :

Եւ եթէ ասիկա ճշմարիտ է ընդհանրապէս, այն ատեն անվիճելիօրէն պինդն է որ հայութիւն և հայաստանցիութիւն նոյնը չեն և, մեր հայրենիքի՝ Հայաստանի շահի տեսակէտէն երկրորդն է արժէքը, ասանց ժխտելու անարժեքն նշանակութիւնը: Գեո մութ դարաշրջաններէն մինչև այսօր մեր բնաշխարհի բարձունքներուն և ծերպէրուն կպած փակած հայն է, հայաստանցի հայն է հղեր միակ մնալուն արժէքը մեր պատմութեան: Գուրը ջլտողները կամ կորուեր են կամ մասնակի աջակցութիւն են բերեր քնաշխարհին: Ի հարկէ, Հայաստանի քնակիչները միապաղաղ ու միատեսակ հայեր չեն եղեր, բայց հոն մնացողը տքներ, տարտապեր, երկնիք ու շինք է սերունդէ սերունդ, յարատեւեր ու հայրենիքը իրեն հետ մշտնջենական է դարձուցեր, մինչ դրոսցին անհետացեր է ի վերջոյ Հայաստանցին է եղեր հայրենիքը բնորոշողը, անոր շահուն միակ օգուտ տուողը: Հեռացողը կամ հեռացողը կորուած, ձեռքէ ելած բեկոր է դարձել ու չքացեր:

Երկրորդ ցուազին փաստ մըն է եղած Մաև այն, որ, մեր պատմութեան սկիզբներէն մինչև այսօր, հայութիւնը չէ հանդիսացեր կուտ, միատեսակ, լեզուով, բարքերով, հոգեբանութեամբ, կենցաղով անբաժանելի նոյն ամբողջութիւնը: Այս երևոյթը մինչև այսօր կայ ու կը շարունակուի: Հայաստանի տարբեր մասերուն վրա ապրող հայեր իրարմէ տարբեր են եղած բարբառով, կենցաղով, մտայնութիւններով, թեքերն նոյն իսկ ցեղային ծագումով ու արիւնով: Ոչ միայն պոլսեցի հայը ոչինչով նման չէ եղած տարօնցի հայուն, կամ թիֆլիսեցի հայը կեսարացի հայուն, այլ նոյն իսկ տարօնցի յաճախ նման չէ վասպուրականցիին կամ Արարատեան աշխարհի հայուն, կամ կարնեցիին՝ Սիւնիքի հայուն: Չէյթուցի հայ չինականին լեզուն պարուեցին երբեք չէ ըմբռնած, աստանցի թրքախօս հայուն բարբառը երեւացիին անհասկանալի է եղած, թողունք այլ ևս բարբրքեր, կենցաղաձևերը, մշակոյթը և այլն: Հայութիւն բար նոյն բովանդակութիւնը չէ ունեցած բոլոր հայաստանցիներու և գաղթաշխարհի հայերուն համար: Անջրպետներով իրարմէ տարբեր մարդիկ են, շրջանէ շրջան: Ոչ միայն մէկ վայրի քաղաքացիին տարբեր է իր վայրի գիւղացիէն, այլ մէկ վայրի գիւղացիին ալ տարբեր է միւս վայրի գիւղացիէն կամ քաղաքացիին միւս վայրի քաղաքացիէն: Եւ ասկա ճշմարիտ է մեր ժողովուրդի բոլոր խաւերուն ու տարբերուն համար:

Եթէ ուզենք այս դանազանաւորումը խոտցնել և մէկ, մեծ բաժանումի տակ առնել, կրնանք ըսել, որ, գէթ հիմնաւոր գծերով, իրարմէ տարբեր հայութիւններ են Հայաստանի հայերը և գաղթաշխարհի հայերը: Երկուքն ալ Հայութիւն են, բայց ինչքան մեծ է անջրպետը: Հայաստանցին նման չէ դրոսցիին, որքան ալ այս վերջինը անուծով ու բարբառով հայ ըլլայ: Այս դատորոշումը շատ աւելի յստակ կերևայ մասնաւոր երկար, դարերով դուրսերը տեղաւորւած հայերու և բուն Հայաստանի մէջ ապրող հայերու միջև:

Մեր պատմութեան մէջ խիստ աննշան է Հայաստանցի հայութիւն ստեղծել ու ձեւաւորելու ճիւղը: Գեո

Տիգրան Մեծի ժամանակ, երբ ամենէն ծաւալուն ու հզոր երկիրն ունէինք, սիրական գիծը պետութիւնն էր, ոչ այդ պետութեան հողամասերուն վրա ապրողներու հայաստանցիութիւնը: Եւ հայկական պետութիւն էր, բայց ոչ հայաստանցի հայութեան պետութիւն: Արշակունիներու և Բագրատունիներու շրջաններուն կարծես ձեւաւորւած, կայմաւորւած, միատեսակ հայութիւն ստեղծելու ու գարգացնելու ճիւղ կայ. բայց զէպքերը չեն հասունցուցած այս ճիւղը, և Պարսէալ տիրական մնացած է բարձրախի, բարբառախի, կենցաղախի խիստ քանազանաւորումը: Ռուբէնեան իշխանութիւնը կիլիկիոյ մէջ արդէն Հայաստանի իշխանութիւն չէր, այնպէս որ Հայաստանցի հայութիւն դարձնելու ոչ իսկ հողը կար:

Այն բառնչական անէծքը, գոր ա՛յնքան դառն չեւտերով կարտասուին մեր պատմագիրները, մեր նախաբարական տուններու անմիաբանութիւնը, կամ նոյն իսկ մինչև այսօր հայերու հաւաքական ախտատանքի անընդունակութիւնը, որ առած է կարգ անցած է, չափով մը գիւրը չէ բացառելի, եթէ հարցը քննենք վերի մեր մատնանշած լոյսին տակ և համոզուենք, թէ միտեսակ հայութիւն, միտեսակ բարբառ, բարք, կենցաղ, ապրում չունենալու հետևանք են ստոնք, քան օգիական կան թերութիւններ հայ մարդուն մէջ: Վերջապէս, մեր նախաբարական տունները ամենքն ալ բոլոր շրջաններուն ապիկար, անմիաբան, անափառ, կըրտտ, կամակոր մարդիկ չէին, ոչ ալ այդպիսի բացասական նկարագրի արդիւնք էր յաճախ գլուխ ցցող անմիաբանութիւնը, այլ որովհետև հայութիւնը իւրաքանչիւրին համար տարբեր բովանդակութիւն էր: Ուրիշ էին իրարմէ բարբերով, կենցաղներով, մտայնութիւններով, նոյն իսկ շահերով, և Հայաստանի, հայաստանցիութեան, հայաստանցի հայու ընդհանրական գիտակցութիւնը չկար: Ասկէ ներհակութիւնները, հակամարտութիւնները, անհասկացողութիւնները և պառակտումները:

Միակ ընդհանրական գիծը, որ բոլոր տեղի հայերուն համար միևնոյն իմաստն է ունեցած, միակ յատկանշող տարրը, որ բոլորին համար ալ նոյնն է եղած դարերով, որ բոլորը սերտօրէն իրարու է միադաշած և ստեղծած է հասարակաց յատկութիւն, հայ քրիստոնէութիւնն է եղած, և անոր անօրէ՛լ հայ յուսաւորյալն եկեղեցին: Փրիստոնեայ հայը կրօնքի մէջ միայն միատեսակ է ամենուրեք. բոլոր հայերու անվիճելի խարխիսն է ան, անով է յատկանշուած առաւելապէս, անով է մօտեցած ու նմանած իր եղբայրակիցներուն և արիւնակիցներուն: Միակ հասարակաց բարբառը, որ բոլորն ալ յեղեցիւղած են կամ ըմբռնած, աղօթքի լեզուն է եղած հայ եկեղեցիէն ներս: Հայ քրիստոնեայ, այս է բոլորը բնորոշողը և որակողը: Գիւղացի կամ քաղաքացի, առեւտրական կամ վարժապետ, տիրացու կամ դործակալ: Ժամկոչ կամ տէրտէր, մատենագիր կամ վիճարկական, աղքատ կամ հարուստ, կին կամ տղա-մարդ՝ բոլորն ալ եղած են քրիստոնեայ հայեր, լուսաւորչական հայութիւն:

Ճշմարիտ է, հետապայիս լուսաւորչականութիւնն ալ միապաղաղ չէ մնացել, ներմուծւած են քիչ մը տարբեր եկեղեցիներ հայոց կրօնական աշխարհին մէջ՝ կաթոլիկութիւն ու բողոքականութիւն, բայց այսօրվաստը ընդհանուր միապաղաղութիւնը չէ խանգարած մեծ

շահիրով, չէ փոխած ընդհանրական բնորոշիչ գծի գոյնը: Կաթնովի հայնի մլ, բողոքական հայնի ալ եղած են ջրխտոննայ հայերի ալ, սուս դաւանական անշնչաւ տարբերութիւններով լուսաւորչական հայնի: Եւ դատարի խօսք չէ, և եր մեր պատմութեան յեղուն ըմբռնողներ կը կրկնեն ու կը պնդեն, թէ հայ եկեղեցին հանդիսացած է ազգային եկեղեցի ու սատարած է հայութեան պահպանման: Այլաբար բոլոր հայերը կ'ընէ մէկ գծի վրա շարժինք և անոնց ճակատներուն վրա փնտռինք իրենց ազգութեան յայտարար նշան մը, որ բոլորին անտարակիւրօրէն հասարակաց ըլլար, քրիստոնէութենէն զատ ուրիշ ոեէ նշան չպիտի կրնայինք գտնել: Հայկական ոչ մէկ արժէք՝ հայրենիք, լեզու, դրականութիւն, արեւստ և այլն, չի խօսիր այնպէս բարասլուն բոլոր հայերու սրտին ու զգացումներուն, որքան հայ եկեղեցին:

Քրիստոնէութենէն զատ, որ բոլորին ընդհանրական գիծն է, բնական պիտի ըլլար որ, եթէ ձախող ու դժգոհ յատուհանները չըլլային, հայաստանցիութիւնը կազմէր մեծագոյն բնորոշիչ հասարակաց գիծը հայ մարդերուն: Բայց այսպէս չընթացաւ մեր պատմութիւնը: Ընկերային, տնտեսական, քաղաքական, կրօնական և այլ բազմազան բռնութիւններու պատճառով շարունակեցաւ անբնդհատ հայուն արտագաղթը հայրենիքէն. և նոր միջպայքերու մէջ գլորած հայերը, անկախ իրենց կառքէն, կամ՝ կորուցեան ձուլեցան, կամ՝ մնացին ու շարունակեցան հայ անունով, բայց խօսեցան տարբեր բարբառ, ունեցան տարբեր բարբ, տարբեր մշակոյթ, տարբեր կենցաղ, և իբրբառ նման, իրարու կտոր մնացին միայն մէկ յատկանշով՝ հայ եկեղեցիով:

Եւ տեղի ունեցաւ 19րդ դարու կէսերէն սկսեալ հայոց վերածնութեան մեծ շարժումը: Դարու տիրական գաղափարներու ճնշումը մէկ կողմէն, բնաշխարհի ժողովուրդին ապրած անտանելի, դժոխային կեանքը յեղաշրջելու, վերանորոգելու անդամադրելի պահանջը միւս կողմէն սթափեցուցին հայութիւնը ամենուրեք իր խոր թմբիւրէն: Գաղթաշխարհի համեմատաբար լուսաւոր կեդրոններէն լոյս մըն էր սկսաւ ողողել ազգին բոլոր խաւերը: Դպրոց, կրթութիւն, դատարարականութիւն, յոսանքի միութիւն՝ դարձան կարգափոխներ: Հայութիւն, ազգութիւն, նոյն իսկ ազատութիւն ու պայքար՝ սրբան ճնշել հայ ականջներուն: Տեղը ծնաւ Մխիթար Արքայապետ, Ալիշաններու, Խրիմեաններու, Նալբանդեաններու, Բաֆֆիներու, Աբովեաններու, Օտեաններու, Պալեաններու նման առաջնախոյզ գէմեր: Արևմտահայոց վերածնունդին՝ որ Մահմանազարութեան մէջ կամ շուրջ խորացաւ, գուգորդեցաւ արևելահայոց գարթօնը: Նոր հայութիւն կը դարձնէր, ազգային կը շարժէր և հանձնարին գիտակցի հայութիւն: Կը թէքը թէ դարերու խորքերէն աղօտացող հնաւանդ ժայն է որ կը պտտակար, և հայը պիտի գտնէր իր կազապարը:

Բայց ի՞նչ էր այս գարթօնը ինչ էր թիւնը. գրեթէ միայն մշակութային, աւագ: Հայութիւնը պէտք է արթնար, հայերը պէտք է դիմացիկն ու իմացական անհատներ դառնային, քաղաքակրթիւն, բայց իւրաքանչիւր ոք իր ապրած վայրին մէջ: Ոչ ոք չհամարձակեցաւ աղաղակել, եթէ նոյն իսկ մտածեց, թէ Պոլս կամ Մոսկուա, Իդմիր կամ Պաքու վերածնիրը,

մշակոյթի տիրակալը նոյնը չէ Երևան կամ Կարին, Վան կամ Մուշ վերածնելու հետ: Հայութիւնը դարձաւ պաշտամունքի առարկայ, ոգեկուրցեցան մեր Տիրաններն ու Արտաշէսները, Վահագներն ու Արայ Գեղեցիկները, Հայկերն ու Արամները, բայց հայրենիքի գաղափարը, հայաստանցիութիւնը անտեսեցաւ:

Հայ մամուլը դուրսը կը դառնար, հայ գիրքը դուրսը լոյս կը տեսնէր, հայ արհեստաւոր դուրսը կը բանէր կը քրտնէր, հայ աշխատաւորը դուրսը կը հիւժք կը մեռնէր, հայ առևտրականը դուրսը կը շահէր կը վաստակէր, հայ մանկտին դուրսը կը դատարարակէր: Եւ արթնեցաւ հայութիւնը, բայց ոչ հայրենիքի գիտակցութիւնը: Բարբերը չնոյնացան, բարբառները չնոյնացան, թէ և աշխարհիկ դրական լեզու ու դրակառնութիւն ստեղծեցաւ, բայց մասնուժները և՛ ապրումները չնոյնացան: Հայը թող հարուստ ըլլար, բովիչ, փաստաբան ըլլար, մամուլի ըլլար, խմբագիր ըլլար, բայց հող չէր Պոլս մնար թէ Պաքու, Իդմիր թէ Վանտիկ, Տրէզնօ թէ Փարիզ: Հայաստանը ինքը օդուտ ունէ՞ր այս կուլտուրականացումէն. դժուար թէ. բացի, ի հարկէ, բուն հայաշխարհի մէջ տեղի ունեցած մշակութային գարթնումին առաջատարութեան: Եւ դարձեալ ամէն տեղի հայեր շարունակեցին մնալ տարբեր մարդիկ և չկարողացան՝ քրիստոնէութենէն զատ՝ նոր ընդհանուր գիծ գտնել:

Հայութիւն, ազգութիւն. բայց այս բաներուն մէջ չդրեցաւ հայրենիքի բովանդակութիւն, հայաստանցիութեան ըմբռնում: Եւ ստեղծեցաւ վերին աստիճանի բնորոշ, սնամէջ ու հիւանդոտ բարձր՝ ազգայնորութիւն՝ փոխանակ հայրենասիրութեան: Եւ դարձեալ ամէն տեղի հայեր շարունակեցին մնալ տարբեր մարդիկ և չկարողացան՝ քրիստոնէութենէն զատ՝ նոր ընդհանուր գիծ գտնել:

Այդ գիծը պիտի դար, գէթ մասնակիօրէն, հետագային, ծանրածանր կորուստներէ և զոհերէ ետք: 19րդ դարու վերջին տասնամեակներէն սկսեալ գարթօնը մտաւ նոր հունի մէջ: Հայկական յեղափոխութեան շարժումն էր, որ փոխեց գիծը, նոր տարբ, նոր բովանդակութիւն մտցուց անոր մէջ: Սկսաւ կերտուի նոր ըմբռնում, նոր հայ մարդու տիպ, նոր դադափար, — հայրենիքի գաղափարը և Հայաստանի հայը վերածնունդի կերտողը բնաշխարհը համարեցաւ. պայքարը՝ դժամ, հերոսական, յաճախ անհաստատ, հոն մղեցաւ. արևելք հոն հուսեցաւ ուղիօրէն: Գաղթաշխարհը դարձաւ արևից միայն, դրսի հայուն սիրտը բարախեց Հայաստանի ու այնտեղի հայուն համար: Եւ եթէ հայոց վարչական գործերու կեդրոնները չփոխադրեցան երկիր կամ դրսի հայ մարդիկ Ֆիդիքայպէս չներգաղթեցին, անուրանախօրէն հոգեբանական ներգաղթ տեղի ունեցաւ: Բնաշխարհն էր մազիւրը այլ ևս. Հայաստանն էր արժէքը. հայը հոն պէտք է կերտէր իր ապագան, հոն ձևաւորէր, հոն ամբարնար և ինքնորոշէր: Ազգը չէր արժէք, այլ հայրենիքը: Այլ ևս քրիստոնէութիւնը չէր որ պէտք է կազմէր հայ մարդու ընդհանրական ստորոգիւնը, այլ հայաստանցիութիւնը:

Եւ այս մտածողութիւնը, կամբերու և ճիշդերու այս վարքագիծը, հողիներու և մտքերու մէջի այս իրական յեղափոխութիւնը բերաւ, աւելին քան ունէ ուրիշ ազգակ, Հ.Յ.Դ. Դաշնակցութիւնը: Բառատուն երկու տարի է արդէն, և հայութեան մէջ ոչ մէկ խաւ, ոչ մէկ դասակարգ այնպէս միատեսակ, ինքնայատուկ, հայեցի, բոլորի համար բնորոշ գիծ չունի՝ ինչպէս դաշնակցա-

կանները ամենուրեք: Երբ դաշնակցականը կրուէ, թէ չկայ կաթոլիկ, լուսաւորչական կամ բողոքական հայ, այլ կայ հայ քաղաքացի, ան շօշափելի, թանձրացեալ իմաստ կը դնէ այդ խօսքի մէջ, որովհետեւ իսկպպէս Դաշնակցութեան մէջ որդեգրականը, կաթոլիկը կամ լուսաւորչականը նոյն արդարն է, նոյն ըմբռնումով, նոյն հոգեվիճակով, նոյն ապրումով, նոյն իսկ յամախ նոյն կենցաղով հայ մարդը: Երբ ան կրուէ՝ չկայ պարտականայ, ամերիկական, եւրոպական, արեւմտահայ կամ արեւելահայ, ոչ թէ ասով քաղաքական առողջ հասարակութիւն մը կը յայտնէ միայն, այլ նաև, ճշմարտօրէն, բոլոր այդտեղացիները միատեսակ, նոյն բնորոշ գիծերով, նոյն ընդհանրական նկարագրի տէր հայերն են Դաշնակցութեան մէջ: Երբ դաշնակցական մամուլը կը խօսի, հետորը կատեմատիստէ, գրագէտը կերկնէ, աւելի քան ուրիշ ոեւէ խաւի դրող, ատենախօս կամ մամուլ, իր խօսքն ու գիրը հասկնալի կը դառնան գանազան տեղացի ամէն խաւի մարդոց: Այո, անոր բարբառը ըմբռնելի է թէ՛ սրւնեցիին, թէ՛ վասսուրականցիին, թէ՛ ամերիկահայուն, թէ՛ թիֆլիսեցիին, թէ՛ պոլսեցիին հասարակութեան աւելի քան ուրիշ ոեւէ խաւի մարդու խօսք:

Ինչո՞ւ է այսպէս: Որովհետեւ անոր մտատիպարը հայրենիքն է ու հայաստանցի հայը, ոչ թէ ոեւէ անձև, անկերպարան, անորոշ հայ: Երբ Դաշնակցութիւնը կաղաղակէ՝ Միացեալ Անկախ Հայաստան, սա մշակութային, քաղաքական կամ կրօնական ինքնորոշումի հաւատամբ է միայն, այլ հայութիւնը ամբողջ իբր նման մէկ հօտ, նման մէկ ժողովուրդ ինքնորոշելու հաւատամբ: Անկախ հայրենասիրութիւնը կըմտնէ, ոչ սղգապիրութիւնը: Անկախ հայ մարդուն ազգային արժէքը կը պայմանաւորէ հայրենիքով, ոչ ասկէ անկախ և դուրս:

Եւ մեր բովանդակ պատմութեան մէջ թերևս ստաւիին անգամն է, որ, ահա մօտ կէս դարէ ի վեր, այս երանգը ստացած շարժումը կը շարունակի: Դաշնակցութիւնը միայն արտասայտիչն է այդ շարժման. ցեղը ինքն է, հայրենիքի ընդերքէն յառնող ճայնն է որ կը հնչէ անոր բերնով: Եւ մեր կուսակցութեան բոլոր ակառակողները, ինչ աղանդի ու ստաղանդի ալ պատկանին, պարտաւոր են լաւ ներթափանցի Դաշնակցութիւնով արտասայտուող հայկական շարժման ներքին այս իմաստին ու տապալըր փայտին գարկած ատեն ոտքերնուն չիջնցնեն: Մեր կուսակցութեան ծրագրային ինչ ինչ կէտերուն կամ գաղափարախօսական հայեցանքերուն անկողնօրէն ստարկողներ, ոչ, ի հարկէ, կուսակցական կիրքով անբուժելիին կուրացողները, լաւ պէտք է ըմտնեն որ Դաշնակցութեան ստացած ամէն հարած հայրենիքի սրտին տրւած հարւած է, և եթէ հայութիւնը չտուժէ ալ անկէ, Հայաստանը կը տուժէ, որովհետեւ հայութիւնը պակասաւոր, թերի ըմբռնում է մեզ համար, եթէ անոր մէջ չէ խտացած հայաստանցիութեան գաղափարը: Հայը թերի, պակասաւոր անհատ է, եթէ անոր մէջ չկայ հայրենիքը:

Ոեւ թիրմացութիւն կանխելու համար անմիջապէս յարենք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ասով գաղթիւսիս հայրենի հայրը հայութեան զուր չի նկատեր, ոչ ալ անոնց հանդէպ հարձականքներ կը զարգանան: Դրաի հարեր հայ են, բայց օգուտ են Հայաստանին միայն այն պարագային, երբ կը վերադառնան երկիր ու հոն կապրին, կը ստեղծագործեն, կը մեռնեն: Հայկական պիւրքը արժէք է իբր աղբիւր՝ հայրենիքին յաւելածական ատաղձ, նիւթ տալու: Եւ այս տեսակէտէն ուղղակի ոճբային է մեր երկրի այժմեան տէրերու վերաբերմունքը դրսի հայերուն հանդէպ: Հայաստանի կոմունիստ տէրերը կարճամարձկն արտասահմանի հայրեր, որովհետեւ անոնց երկէտը չորհրդային աշխարհի շահն է, ոչ Հայաստան-հայրենիքի: Այստեղ երբեք հասարակաց լեզու հնարաւոր չէ դաշնակցականին ու հայ կոմունիստին միջև: Եւ այս պատճառով ոչ միայն գարշելի է Երեսանի մանկալուկին աղաղակը՝ թէ ճմենք ամենայն հայոց կառավարութիւն չենք, այլ նաև գաւաճանական: Անք կը հասկնանք և նոյն իսկ ճշգրիտ կը գտնենք, որ հայկական ոեւէ կառավարութիւն ըլլայ Հայաստանի կառավարութիւն և ոչ թէ ամենայն հայոց, եթէ, սակայն, մեկնակէտ ըմբռնիքը վերը մեր մատնանշած շահը՝ հայրենիքի շահը:

Ի հարկէ, գաղթաշխարհի հայը Հայաստանի չհերուն տեսակէտէ արժէք չէ: Ի՞նչ օգուտ պուլկարահայն կամ ամերիկահայն՝ բնաշխարհին՝ բացի փոքր ավակցութիւններէ, որոնք ժամանակաւոր բնօրէն կը կրեն ու կողմնակի կարիքներու կը բաւարարեն: Նոյն իսկ կարելի է համարձակել ըսելու, թէ Պոլսի, Թիֆլիսի կամ Պաքուի մէջ հօգր հայութիւն մը չափով մը ոչ թէ օգուտ, այլ վնաս է Հայաստանին, եթէ հաշիւ առնենք որ ան իր բազկի ախտատանջով ու մտքի կարողութիւններով կուժեղացնէ մեր հայրենիքին եթէ ոչ թնամի, գէթ մրցակից պետութիւնները: Բայց դրսի այս բոլոր հայերը օր մը ներս գաղթելու, մայրենի հողին վրա տեղաւորելու, հոն քրտնիլ, տքնիլ, արտադրել ու արժէք կուտակելու ատաղձ են: Եթէ այս հեռանկարը չըլլար, ուրիշ իմաստ դուրսութիւն չպիտի ունենար արտասահմանեան հայերու իբր հայութիւն յարատւելու ճիւղերուն մէջ: Դուրսը մշակոյթ ունենալ, մամուլ, գիրք, արեւտ մշակիլ, եկեղեցի կանգնեցնել, հայկական լեզու, բարձր ու կենցաղին կառչիլ աննպատակ պիտի դառնային:

Հայաստանէն դուրս հայը խլեակ է, սոսկական անհատ, խաղալիք ու անուշո այն միջավայրին, ուր պարտաւորւած է իր կուսքը քաջքը: Անոր արժէքը պայմանաւորւած է Հայաստան վերադառնալու հեռանկարով:

Ոչ թէ միայն հայ, այլ Հայաստանցի հայութիւն: Ոչ թէ միայն ազգասէր հայ, այլ հայրենասէր հայ: Ահա Դաշնակցութեան սրբազան ատաղբութիւնը, զոր պատմութիւնը դրած է անոր ուսերուն:

ԱՍՏՈՒՐ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԱՃՈՒՄՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

## ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՈՒՐ

Թիքէ յետպատերազմեան այս վերջին տասնամեակի առաջին տարիները ազգային վերածնութեան ու զարգացման ինքնաժողովման շրջան պէտք է համարել Պարսկաստանի համար, երկրորդը՝ վտահօրէն պէտք է նկատել տնտեսական ազատագրման և վերաշինական աշխատանքների շրջան:

Շնորհիւ աշխարհադրական դիրքի և ժողովուրդ Արեւելքում ձեռք բերած զարգացման գերակշռութեան՝ Իրանը դեռ հին դարերից սկսած հանդիսացել է երկու մեծ ցամաքամասերի — Ասիոյ և Եւրոպայի միացնող ամենալայնարագոյն կամուրջը: Ատրաքսիական, Լիդիոյ, եգիպտական միմեանց հետ մշտապէս պայքարող պետութիւնները իրեն ենթարկելով, միւս կողմից գրաւելով Հնդկաստանի հիւսիսային գաւառները՝ վաղեմի Իրանը Միջերկրական ծովից մինչև չինական պարսպները համոզ հսկայ պետութիւնը կենտրոնական իշխանութեան կայսերի համար ունէր իր ժամանակի Հարողակցութեան յարմար միջոցները: Ձթագաւորական ճամապարհը և ռազմաքաղաքական նկատումներով կառուցւած այլ մասն ու մեծ խճուղիները, որոնք մի քանի ուղղութեամբ ահօսելով Փոքր-Ասիան, Միջագետքն ու Եգիպտոսը՝ անցնում էին իրանական բարձրաճանաչելով ու այնտեղ կապուած դէպի Հիւս. Հնդկաստան և Հեռուտար Արեւելք տանող ուղիների հետ՝ առաջին պայմանն էին պահպանելու Իրանի համատարած գերիշխանութիւնը իրեն հպատակ բոլոր երկրների վրա:

Հարողակցութեան այս նպատակը միջոցները, որոնց ապահովութեան ու կանոնաւոր վիճակով մշտապէս մտաւոր էին Աքամենեաններից սկսած մինչև Պարսիկներն ու Սասանեանները, բնականաբար, մեծապէս պէտք է նպաստէին Իրանի տնտեսական ներքին և արտաքին յարաբերութիւնների ծաւայման: Իրանով պէտք է բացատրել Զ-Ծ դարերում (Ք. ա.) Միջերկրական և Սեւ ծովերի ափերին մի շարք վաճառաչա՛ն զարգացների ծնունդը, որոնք մեծ մասով ուղղուած էին արևելքի կապուած էին պարսկական թագաւորամիտ զարգացների կամ աւատական մեծամեծների առևտրական յարմար ճանապարհների վրա ընկած բնակավայրերի հետ:

Բացի ցամաքային ճանապարհների նախաքրիստոնէական Իրանը հոգ էր տանում և ծովային ճանապարհների կանոնաւորման վրա, ինչպէս, օրինակ, բոտ Հերոդոտի վկայութեան՝ Դարձն Վշտապետանին է պատկանում Նեղոս գետը և Կարմիր ծովը միացնող ջրանցքի վերանորոգումը, որ նրա դրամական միտումը է, չափերի ու կշիռների մէջ կատարած բարենորոգումների հետ՝ մեծապէս նպաստեց միջազգային առևտրական յարաբերութիւնների զարգանալուն:

Միջազգային առևտրի իրական զարգացումը, սակայն, վերաբերում է Ալեքսանդր Մակեդոնացուն յաջորդող շրջանին, երբ այս մեծ աշխարհակալի դէպի Արեւելք կատարած արշաւանքների հետևանքով ոչ միայն հիմնովին փոխեց Առաջնորդ Ասիոյ ընկերային ու տնտեսական վիճակը, այլ և առևտուրը իրօք համաշխարհային նշանակութիւն առաւ, որովհետև առաջին անգամ Հեռուտար Արեւելքն ու Արեւմուտքը տնտեսական սերտ յարաբերութիւնների մէջ մտան միմեանց հետ Հելլենական գաղութիւնների և Իրանի վրայով:

Արաջ կերպով զարգանում են նաև միջազգային առևտրական գլխաւոր ճանապարհների վրա ընկած զարգացները, դրամական շրջանառութիւնը դառնում է հաստատուն գործօն առևտրական յարաբերութիւնների միջև, Առաջաւոր Ասիան բօքափում է բնասնունեակամ իրաւակարգը և անցնում Բաղափային տնտեսութեան:

Արեւելեանների անկումը և տեղական ազգային պետութիւնների կազմելը բնաւ չխաթարեց միջազգային առևտրական յարաբերութիւնների ծաւայումը: Մանաւանդ Բիզանդոս-Սասանեան շրջանում, մինչդեռ Հայաստանը կորցրեց իր մինչ այդ ունեցած առևտրական միջնորդ դերը, Իրանի նշանակութիւնը, ընդհանրապէս՝ աւելի բարձրացաւ: Յատկապէս չինական մետաքսի նշանակութիւնը միջազգային առևտրի մէջ այդ շրջանում շատ բարձրացաւ, որովհետև նրա դարձածութիւնը, հակառակ իր բարձր արժէքին՝ շատ արածուած էր Հռոմում և Բիզանդիոնում: Չինական մետաքսը, ինչպէս և արևելեան այլ հիւսւածեղէնները այլ ճամբայ չունէին, քան Իրանը: Հասկանալի է ուրեմն, թէ ինչու Իրանին յաջողեց իր մենայնուրէր զարմնէլ մետաքսի առևտուրը մինչև Յուստինիանոս կայսեր շրջանը:

Սասանեաններն իրացնելով ցամաքային միջնորդ վաճառականութիւնը Արեւմուտքի և Արեւելքի միջև տիրական դեր ստանձնեցին և ծովային վաճառականութեան մէջ, որով Չինաստանի և Հնդկաստանի հետ եղած առևտուրը ամբողջովին անցաւ նրանց ձեռքը: Իրանի տիրական դերը միջազգային առևտրական ճանապարհների վրա այնքան ուժեղ էր, որ բիզանդական կայսրներից ոմանք ստիպուեցին այլ ճանապարհներ փնտռել Արեւելքի հիւսւածեղէնը և չինական մետաքսը ուղղակի Բիզանդիոն ներմուծելու համար, բայց նրանց այդ փորձերը ի դերև ելան չնորհիւ նրան, որ պարտիկ վաճառականները տիրում էին ոչ միայն հիւսիսային Կասպեան ճանապարհների, այլ և Յէլլոս կղզու առևտրական հրապարակը պահում էին իրենց հսկակշիռ տակ: Միայն Յուստինիանոսի իշխանութեան վերջին, երբ միտոնարները զուրա բերին Չինաստանից շերամի հանդը, Բիզանդիոնը ի վիճակի եղաւ ստեղծելու մետաքսի սեփական արդիւնաբերութիւն, և Իրանի մենաշնորհը այլ ևս կորցրեց իր արժէքը:

Իրանի միջնազգային առևտրական յարաբերութիւնների մէջ ձեռք բերած տիրական դիրքի, ինչպէս նաև նրա տնտեսական զարգացման կէտերի համար, սակայն, աւելի ծանր հարած եղան արաբական արշաւանքները: Անապատի որդիները ոչ միայն դարերի զարգացութեան թուրքիւն ունեցող Պարսկաստանը ենթարկեցին իրենց զարգացական աւ մշակութային տիրապետութեան, այլ և արաջ կերպով խլեցին նրա վաճառաչա՛ն շուկաները և վտարեցին պարսիկներին միջազգային առևտրական բոլոր ասպարէզներից:

Քաղաքական նոր պայմանների հետևանքով փոխում են նաև առևտրական ճանապարհները: Մի կողմից առևտրական եռանդուն յարաբերութիւնները մշակելով Կովկասի վրայով Սեւ ծովի հիւսիսային ափերին և Վոլգայի վրա հաստատուած բուլղարների և իսաղարների հետ, միւս կողմից իրենց ձեռքն ունենալով Աֆրիկէի հիւսիսային ափերը մինչև՝ Պրինիցեան թրակալըղին՝ արաբների նախաձեռնութեամբ նոր կայսեր են

Հաստատում Արեւմուտքի և Արեւելքի միջև: Փոքր Ասիական ճանապարհները, ինչպէս և Սևե ծովեան նաւահանգիստները չտրջիւ արարբիւզանգական մշտական պաշարի ամրութեան են մտնում: Երկար փամանակի համար: Եւ միայն խալիֆայութեան ներքին պարզարեւի և աստիճանական տկարացման հետ Իրանը կրկին վերականգնում է իր ներքին տնտեսութիւնը և անկտրական նախկին կայսրը, մանաւանդ, որ Հայաստանի ճանապարհները Բազրատունիներէ փամանակ լայն հնարաւորութիւններ էին տալիս վերանորոգելու անկտրական գործառնութիւնը Բիզանդիոնի հետ:

Այդ դարերին, ուրեմն, որ արարականութեան համար նահանջի շրջան հանդիսացան, իրանականութիւնը կրկին սկսեց ուռճանալ, թէ տնտեսական և թէ շոգեւոր աշխարհում: Սակայն, քաղաքական ներքին պատահումով վիճակը, մի քանի մանր, միմեանց զէմ յաւէտ պաշարող իշխանութիւններ կազմելը Իրանի ներքում՝ անկարելի դարձրին տնտեսական մի ընդհանուր կենտրոն սպրկելու հնարաւորութիւնը: Այդ տեսակետից թուրքական ցեղերի արշաւանքները զէպի Արեւմուտք իրենց սկզբնական շրջանում աներ սփռեցին Պարսկաստանում, բայց սելջուկեան և աւելի ուշ մոնղոլական պետութեան կայունացման հետ աստիճանաբար Իրանի անկտրական կենտրոն և արհեստագործական արդիւնաբերութեան համար աւելի բարենպաստ պարմաներ ստեղծեցին: Մի կողմից Ռաշայրաց Արշաւանքները խոչըր փոփոխութիւն մտցրին միջազգային յարաբերութիւններէ մէջ՝ գրաւելով Սիրիան և Միջերկրական ծովեզերքը մի շարք կարեւոր նաւահանգիստներ՝ խաչակիրները անկտրական անմիջական կապեր Հաստատեցին Արեւելքի հետ, որով արար վաճառականութիւնը զրկեց իր միջնորդ դերից և կորցրեց անմիջական կապերը Արեւմուտքի հետ: Արար խալիֆայութեան համար աւելի ծանր եղաւ երբ թուրքական ցեղերը աստիճանաբար զէպի Արեւմուտք գրաւելով՝ 1258 թւին գրաւեցին Բագդատը, որից յետոյ ոչ միայն արարականութիւնը իր պատմական դերը ստիպեց թուրանականութեան զիջելու, այլ և նրա քաղաքական և տնտեսական կենտրոնը (Բագդատը) իր անկտրական առաջնութիւնը յանձնեց Իրանի մէջ գարգացող մոնղոլ իշխանութիւն մայրաքաղաքներին:

Անկտրական յարաբերութիւնները նոր դասաւորումների պատճառը այն էր, որ Ռաշայիրներէ, եղիզական և սուլթաններէ ու թուրանական զէպի Արեւմուտք շարժող ցեղերի փոխադրած սպաքարի հետեանքով ամրութեան է մատնում Միջազգային վրայով անցնող հարաւային անկտրական ուղին, որպէս գլխաւոր թատրոսական գործողութիւններին:

Իրա զիմաց ընդհանրական բարձրանում է հիւսիսային անկտրական ուղին, մանաւանդ այն շրջանից, երբ վենետիկցի և ջենովացի վաճառականները նախահեռնութեամբ վերականգնում է Պարսկաստանի հուսիսից անցնող անկտրական նախկին ուղին, չնորհիւ այն հանդամանքի, որ այդ ճանապարհները (որի վրայով միաժամանակ պաււում էր կապը մոնղոլական հսկայ պետութեան միջև) համեմատաբար աւելի ապահով էին և հեռու կուի վայրերից:

Մոնղոլական հսկայ պետութիւնը, որ իր մէջ միացրել էր Պրինաստանից մինչև Միջերկրական ծով եղած քաղաքակիրթ երկիրները, չէր կարող չնպաստել անկտրական նոր յարաբերութիւնների ծաւալելուն և տիրական արհեստագործական արդիւնաբերութեան ծաղիլման, որի անհրաժեշտութիւնն անխուսափելի էր իր ձեռնարկած աշխարհակալական և ուսովական գործողութիւնների համար: Այդ շրջանում միջազգային անկտրական իրենց անմիջական մասնակցութիւնն են բերում Հիւսիսային Մոնղոլական պետութիւնները, Ռուսաստանը, Պրինաստանը, Միջին Ասիան, Ռիլան, Բուխարան, Հնդկաստանը, միւս կողմից Իտալական քաղաքահանրապետութիւնները, Կ. Պոլսը և այլն:

Ու այս բոլոր անկտրական յարաբերութիւններէ հանդոյցը, ինչպէս հին փամանակ Բագդատը՝ դառնում է Իլիսանների մայրաքաղաք Թաւրիզը և այս Սուլէյմանիէն, որ խաչաձեռն էին զէպի Պրինաստան ու Հնդկաստան տանող անկտրական գլխաւոր ճանապարհները: Թաւրիզում էին դառնում նաև իտալական քաղաքահանրապետութիւնների անկտրական գրասենեակները և նրանց դեսպանատները, ինչպէս վկայում է Թաւրիզի անկտրական կարեւոր դերի մասին իտալիս այդ շրջանում Հնդկաստանից Պարսկաստանի վրայով Եւրոպա վերադարձող Մարկո-Պոլոն:

Մոնղոլական պետութեան քայքայման և 14—15 դարերի մէջ թուրանական նոր յորձանքների հետեանքով խաթարուած պարսկական անկտրական կենտրոնը փոքրակենդանանալու յաջող փորձեր է անում իրանական ազգային պետութեան Հաստատման նախօրեակին և նրա փամանակ, սակայն, միջնադարի վերջին դրան զուգահեռող նոր ճանապարհների գլուխըր վալսուղի Դամաշի և Քրիստաւոսիար կայսրանի միջնորդ, եկամ կողուկ կերպով փոխելու մինչ այժմ գոյութիւն ունեցող միջազգային անկտրական ճանապարհների ուղղութիւնը:

Պարսկաստանը զեւ բուրյովին շփոթեց իր ազգային տնտեսութիւնը և նոյն իսկ Սեւ Արքա Մեծ տնտեսական քաղաքականութեան շնորհիւ մի պահ մեծ գարգացման Հաստատեցան տեղական վաճառականութիւնը, որի մէջ խոչըր տեղ ունեցան նոր-Ջուղայի և Սպահանի հայկական գաղութները: Եւրոպական դրամատորական պետութիւնների աստիճանական գրաւումները Հնդկական Ովկանտոսում, միւս կողմից Ռուսաստանի զէպի Հարաւ տարւող աշխարհակալական լայն ձեռնարկութիւնները, սակայն, եկան շուտով ոչ միայն տեղական քայքայում մտցնելու Իրանի քաղաքային տնտեսութեան մէջ, այլ և աստիճանաբար յսփրչտակելու նրա ազգային տնտեսութեան ամենակարեւոր մասը:

Ներքին քաղաքական անկայուն վիճակը, աւատականութեան ուժեղացումը կարգերի փամանակ, բնականաբար, աւելի կաշկարանցին երկիրը քաղաքային տնտեսութեան յատկաբարիմելու հնարաւորութիւնները:

Նոր դարերը հանդիսացան մի տեսակ դարձ զէպի փակ տնտեսութիւն Պարսկաստանի համար, իսկ անկտրը աստիճանաբար օտացաւ զաղութային բնաւորութիւն: Պարսկաստանը միատորէն երկար փամանակ մնաց որպէս շուկայ՝ սպառելու գրամատիրական երկիրների ներքուծուող գործարանային արդիւնաբերութիւնը, միւս կողմից հայթայթելու օտար ճարտարաւեստին՝ վերջինիս համար ձեռնտու պայմաններով առաւ նախանիւթ: Պարսկական բերումներով Պարսկաստանը կարողացաւ ձեռնարկելու պահանջներ իր քաղաքական իրաւական վիճակը, իսկ միատորէն մնաց ենթակայ դարի ուժեղին, անկարող նոյն իսկ ինքնուրոյն և ազատ կերպով տնօրինելու իր ազգային հարստութիւնները, հաղորդակցութեան միջոցները, մաքուր են: Յատկապէս վերջից մշտապէս ենթակայ է եղել Ռուսաստանի և Անգլիոյ անմիջական հակակռքին: Իրանց տնտեսական առանձնաւորութեան երկրորդ պայմաններէրք մէկն էլ բունի կերպով պարտադրած մաքսերն են եղել: Տեղական արհեստագործական արդիւնաբերութիւնը յատկապէս ամենից շատ ստուժեց մաքսային այս ենթարկելով վիճակից, որ անկարող մրցելու պարսկական հրապարակում անարդի հեղեղող օտար գործարանային արդիւնաբերութեան հետ, ի բաց առեւթ մի քանի ինքնատուր ձեռնորդ (գորգադործութիւն, Քերմանի Շաղիք շաբր են)՝ աստիճանաբար խամրեց:

Պարսկաստանի տնտեսական այս ենթարկելու վիճակը տեղի ուղիղ մինչև մեր օրերը: Սակայն, ներկայ Պարսկաստանի կատարելու ձեռնարկատուիլը օտար քայքայիչ ազդեցութիւններից, ինչպէս քաղաքական նախկին ստորագաս վիճակից պայմանաւորում է այս եր-



կրի ղևա անցելու դարու կէտերից սկիզբ առնող ընկերային և տնտեսական կեանքի աստիճանական հոլովումը, որ ամբողջացրեց արտաքին աննպաստ պայմանները՝ զարգացաւ, մինչև մեր օրերի կատարեալ հաստատուումը և ձևաւորումը:

Ուրիշ անգամ մենք ցոյց տւինք, թէ ինչպէս պարսկական աւստականութիւնը պատմական ու տնտեսական մի շարք երևոյթներէ հետաքրքիր, սկսած 1397 զարի վերջերից, աստիճանական սնանկութեան ճամբան բռնեց<sup>\*</sup>): Խարխուղ աւստականութեան դիմաց, ընդհակառակը, անցեալ և ներկայ դարերի մէջ քաղաքային, աւետարական տարրերի զարգացման համար նոր կարելիութիւններ են ստեղծուած: Անգլիական և ուստական երկաթուղիները զննելով ու խճուղային ցանցերը մի շարք կէտերում փակչում են պարսկական սահմաններին և տեղ-տեղ նոյն իսկ ակոսում պարսկական հողը: Աւետարանի դարը ինչպէս դրամի շնորհիւ աստիճանաբար իր ձեռքն է սկսում վերստին անհատկացող աւստականութեան հողերը, գրաւում նաև արդիւնաբերող շուկան իրենց նիւթանոցի Իրանի ազգային մէջ զննելով խառնական աստիճանաշնորհեալ դասերը: Այս ներքալ վիճակը հիմք կաղցնց վերջին տասնամեակները պարսկական ներքալին և քաղաքական ներքին պայքարի, որի յաջող ելքը մեր օրերին յօշուտ քաղաքային տարրի՝ հնարարութիւն տուց մի կողմից և վերջից թօթափել օտար պետութիւններ Իրանի ազգային տնտեսութեան վրա ունեցած անմիջական ազդեցութիւնը և միև կողմից՝ աւելի լաւ պայմանների վրա զննել աւետարանի ու ելեւտական գործառնութիւնները դրան աշխարհի հետ և երկրի ներսում, նաև՝ իրական կարելիութիւններ ստեղծել երկրի ճարտարաբանաստղամաս համար:

Աւետարական կեանքի բարենորոգչական փորձերը, սակայն, անձանօթ չեն եղել այս երկրում: Ի՞նչ անցեալ դարու վերջին տասնամեակի շրջանում երկրի արտաձման և ներաձման ծաւալելը անհրաժեշտութիւն դարձրեց պետութեան համար բարեփոխելու մօտ երկու դար տևող մաքսի կապալային եղանակի մէջ՝ 1900-ին մաքսը զննելով պետութեան անմիջական հակաշուրտակ:

Բարենորոգչական այս առաջին փորձը ճիշտ է աւելացրեց պետութեան հասոյթները, հնարարութիւն տալով վճարելու իր արտաքին անհաշիւ փոխառութիւնների գէթ տոկոսը, բայց պարսկական ազգային տնտեսութեան տնօրինումը ղեկ շարունակեց մնալ օտար պետութիւնների սեփականութիւն, ջանք որ չփոխեց մաքսային սակի շարի (կնքած 1813թ. հոկտեմբեր 12ին Գիւլիտանի գաշնագրով և հաստատուած 1828թ. Թուրքմենչայի դաշնագրով<sup>\*\*</sup>), իսկ Անգլիոյ և Ռուսաստանի հսկողութիւնը մնաց նոյնը ինչ որ անցեալում և նոյն իսկ աւելի ուժեղացաւ, մասնաւոր, «ազդեցութեան դօտինները» րտեղծումից յետոյ:

Աղքատութեան դօտինները՝ բաժանումը, որ իբրև թէ պէտք է մեղմացնէր անգլեալուս պայքարը պարսկական շուկայի համար, աւելի աստիպացրեց երկրի շահագործումը: Տարբեր էին յիշելու երկու պետութիւնների աւետարական գործառնութիւնները Պարսկաստանի հետ: Մինչդեռ Անգլիան, որի Պարսկաստան մուտք գործելուց այնքան օտեժեց Ջուզայի հայ վաճառականութիւնը, աւելի ներածող էր, Ռուսաստանն, ընդհակառակը, Պարսկաստանում փոստում էր անհրա-

ժեշտ նախանիւթ իր երբտասարդ ճարտարաբանութիւն համար:

Այդ և հետագայ տարիներին է պատկանում Գերմանիոյ յաջող մուտքը Թուրքիոյ վրայով պարսկական հրապարակը: Ենթա ճարպորէն օգտագործելով Անգլիոյ և Ռուսիոյ կըրտո հակամարտութիւնը Գերմանիան շատ շուտով դարձաւ վտանգաւոր մրցակից Անգլիոյ համար, մասնաւոր հանդէս դալով որպէս ջատագորդ զազատ ղռներին (Պարսկաստանի-համար) քաղաքականութեան, նա դիւրաւ շահեց տեղական աղքատային տարրերի համակրութիւնը և ջնանց նրանց գրգռել Ռուսիոյ և Անգլիոյ դէմ:

Այս միմեանց խառնաձևող պայքարի շրջանում, Առաջին Յեղափոխութեան շնորհիւ հաստատուած Մէլլիքի նախաձեռնութեամբ, փորձ կատարեց նոր բարենորոգումներ մտցնելու երկրի տնտեսական ներքին յարաբերութիւններին մէջ՝ Նախ՝ ձեռնարկուած է արմատական փոփոխութիւններ մտցնել ելեւտական գործաւարութեան մէջ, որոշում է հաստատել պետական ելեւտացոյցի սկզբունքը: Միև կողմից որոշում է կրճատել արքունիքի ծախսերը, վերացնել տասանորդի իրաւունքը կաւածատէրերի ձեռքից ու նաև մի շարք բարեփոխութիւններ մտցնել հողային յարաբերութիւններին մէջ:

Հակադիպոտիստիկան յողթանակը դրն օժանդակութեամբ, ինչպէս և Մէլլիքի ցուրմը անկարելի դարձրին տնտեսական ասպարէզում ծրագրած այս բարենորոգումները:

Անհետանց մնաց և երկարող Մէլլիքի նախաձեռնութիւնը այդ ուղղութեամբ: Պարսկաստան հրախրուած ամերիկացի Մորգան Շուտտերի ճիւղերը անցան ասպարէզին արտաքին ուժերի ճնշման տակ: Մորգան Շուտտերը երկրի յառաջողէմ տարրերի հետ ստիպւած եղաւ հեռանալ երկրից:

Այս վիճակում Պարսկաստանը հասաւ մինչև համաշխարհային պատերազմ, որ տնտեսական կատարեալ քայքայման շրջան եղաւ այս երկրի համար: Պատերազմի տալին տարիներէից սկսած պարսկական մի շարք գաւառներ ենթարկելով կուռղ կողմերի յաջորդական գրաւումներին՝ հիմնովին աւերակցին: Պետութիւնը զրկեց իր մաքսերից և այլ հասոյթներից: Նոյնքան ծանր անգործարձաւ այս երկրի տնտեսութեան վրա քաղաքացիական պատերազմների շրջանում և Ռուսաստանի շեղացցումը պարսկական շուկայից: Սպառման շուկայ շուճեալու պատճառով՝ միանգամայն քայքայեց հիւսիսային գաւառների տնտեսութիւնը: Անհամապիտեւեց նաև աւետարող, որի ժամանակ ծանր հարւած ստացաւ առաւական և կողկանեան շուկաների հետ կապուած պարսիկ և հայ վաճառականութիւնը: Այս ծանր կացութիւնից օգուտեց Անգլիան, որ մնալով առանց մրցակցի՝ պարսկական շուկան հեղեղեց իր ապրանքներով, անկարող լինելով, սակայն, այս երկրից արտաքին փչանալու գաղտապարտուած նախանիւթերը: Հետեւալ տարիտակը ցայտուն կերպով բնորոշում է Պարսկաստանի այդ շրջանի աւետարական յարաբերութիւնների վիճակը:

Ներածում		Արտածում		
Տարի	% Ռուսիա	% Անգլիա	% Ռուսիա	% Անգլիա
1913—14	55,0	27,5	68,9	12,5
1920—21	4,0	77,8	6,2	43,0
1923—24	15,1	63,0	41,1	22,3

<sup>\*</sup>) «Դրոշակ», 1932թ. № 5, 6:  
<sup>\*\*</sup>) Համաձայն այս դաշնագրի III յօդուածի Ռուսաստանից Պարսկաստան ներածում պարսկականից և ընդհակառակը՝ գանձում էին արժէքի 5%: Այս շրջանում միև պետութիւնների հետ էլ կնքեցին աւետարանաւաճային նման համաձայնութիւններ: Միայն Թիւրքիայի հետ կնքուած դաշնագրով քրիստոնէական մի քանի ապրանքներից գանձում էր 6%:

Իր քաղաքական և տնտեսական գերելիանութիւնը Պարսկաստանում աւելի հաստատուն հիմքեր վրա դնելու համար Անգլիան յաջողեց ստորագրել տալ 1919 թվ. օգոստոս 9ին շահի կառավարութեան մի նոր դաշնագրի, որի կիրառումը Պարսկաստանը պէտք է վերածէր մի սովորական գաղութի: Բայց բայս դաշնագրի վաւերա-

Ինչ վերաբերում է ժողովրդական դպրոցներին, նրանց կազմակերպման ձևը բացարձակ լամէթը Ազգ. Մեծ Ժողովի 8 նոյ. նիստում: Նա ասաց, որ ժողովրդական դպրոցները պէտք է բացւեն ամբողջ երկրում և գործեն աշխատող բնակչութեան համար ամենայրամար ժամանակը: Պէտք է տեսնել 2-4 ամիս: Գպրոցների կազմակերպութեան պէտք է լծուեն բոլոր պաշտօնատերերը մեծից փոքր: Այնտեղ, ուր նման դպրոցներ կազմակերպելը հնարաւոր չէ, պէտք է ղրկել ուսուցչական խմբակներ: Դրա համար պիտի կազմակերպուեն յատուկ ձեռնարկ ուսուցչական խմբեր: Ժողովրդական դպրոցների ֆինկադարութիւնը տեսնել է իր վրա Քեմալը: Լամէթ ընդգծեց, որ նպատակն է դրամ 1929 թիւ ընթացքում գրադիտութիւն ստորեցնել: Բնակչութեան մի քանի հարիւր հազարին, առանց նրանց կտրելու աշխատանքից: Ժողովրդական դպրոցները կանոնադիրը նոյ. 20ին հաստատեց պետական խորհուրդի կողմից և յանձնեց Հանրապետութեան նախագահի վաւերացման: Նոյ. 22ին հրատարակեց պաշտօնաթերթում: Համաձայն այն կանոնադրի ժողովրդական դպրոցները բացւում են ամբողջ երկրում 1929ի յունւար մէկին: Ամէն մէկ ջաղաքացի, 16 տարեկանից մինչև 40, որ չլիտէ կարգալը-գրել նոր այրութիւնով և չի յանձնուում ոչ մի դպրոց պաշտօնական հիմնարկութեան կից, պարտաւոր է սովորել նոր այրութիւնը՝ իրենց շրջանում բացւելիք որևէ ժողովրդական դպրոցում: Ամէն մէկը, որ պարտաւոր է յանձնել ժողովրդական դպրոցը, պէտք է ժամանակին յայտնի ջաղաքացիտարանին կամ գիւղապետին իր անունը և ազգանունը և իմացնել՝ դիտէ՞ հին, արարական այրութիւնը թէ ոչ: Այն անձինք, որ գիտեն արարական այրութիւնը պարտաւոր են յանձնել ժողովրդական դպրոցը 2 ամիս, իսկ անգրագէտները՝ 4 ամիս: Եթէ ընտանիքի անդամներ մէկ կայ մէկը, որ ինքն է ուզում սովորեցնել իր ընտանիքի անդամներին և ազգականներին, պէտք է յայտնի ջաղաքացիտարանին և պարտաւորութիւն վերցնի իր վրա սովորեցնել մասնաշուած ժամանակախիղցում և ներկայացնել ջնուկութեան: Այն անձինք, որոնք իրենց վրա վերցրած պարտականութիւնը չեն կատարի, ինչպէս և այն անձինք, որ կր իուսափեն գպրոց յանձնարելուց, կենթարկւեն օրինական հետապնծման: Նրանք, ովքեր գիտեն լատինական այրութիւնը գպրոց յանձնարելուց ազատ են, բայց չարթալայ որոշ օրերը պէտք է վերակայանան ջնիչ յանձնարողներին, որոնց արած վերակայանները պէտք է ներկայացնեն ջաղաքացիտարան: Բնութեան ժամանակ բոլոր ջաղաքացիները պարտաւոր են ներկայացնել երկու նկար, որոնցից մէկը կր դրել վիպականի վրա, իսկ միւրը կր մնայ ջնիչ յանձնարողովի մօտ: Կանոնադրի մէջ ասւած է նաև, որ ժողովրդական դպրոցներին բացւում պէտք է կատարել մեծ Հանդիսաւորութեամբ և որ ջոնցարկադրումը սկսելու է պետերների կէտից: Տեղերում Ժողովրդական դպրոցների կազմակերպումը և ղեկավարումը յանձնուում է յատուկ յանձնարողովի՝ վայրի գլխաւորութեամբ: Ժողովրդական դպրոցների ծախ-

ջերը հոգացւում են նահանգական միջոցները և պէտք է տեղաւորեն դպրոցներում, մղկութեանում, արձարաններում և ամէն յարմար շէնքում: Սովորողները իրենց պէտք է բերեն գրենական պիտուցները և ւսանողներին պէտք է ճիւղ տրել մէկ օրինակ սահմանադրութիւն՝ Քեմալի ստորագրութեամբ: Այն անձինք, որոնց մօտ աշխատում են ամենաքիչը 20 հոգի բանտեր կամ ծառայողներ, պարտաւոր են բանալ սեփական դպրոցներ, և շրջանի բոլոր ուսուցիչները պէտք է դասաւանդեն և նրանց լրացուցիչ կերպով պէտք է վճարել չորսամսայ դպրոցների համար 50 լիբա, իսկ երկամսանների համար 30 լիբա: Գործարանները, հիմնարկութիւնները, բանտերը պէտք է կազմակերպեն սեփական դպրոցներ: Կանանց դասերը աւանդում են առանձին (չարթալը երկու անգամ կանանց և չորս անգամ տղամարդկանց համար): Քեմալին տրեց «գլխաւոր դասատուի» տիտղոս: Կազմակերպութեան նախագահութեան մէջ մտցուցին Ազգային Մեծ Ժողովի նախագահը, գլխաւոր սպայախոյսի պետը, բոլոր գործադարները և կուսակցութեան գլխաւոր ջարտարարը: Վերահսկողութիւնը յանձնեց կրթական գործադարութեան հսկիչ ըստին: Կանոնադիրը նախատեսում է նաև յատուկ ջարդակաւան մարմին և մրցանակներ այն անձանց համար, որոնք առանձին ջանքեր կը թափեն այլ ուղղութեամբ:

Ինչո՞ւմբեր ամսին եղան պարտաւորութիւնները և յունւար 1ին ամբողջ երկրում մեծ Հանդիսաւորութեամբ բացւեցին ժողովրդական դպրոցները, թէև Հանդիսները սահմանափակուցին կրթական գործադարը Նէշադի մահաւան պատճառով: Պարզեց, որ, մասնաւորապէս Պոլսում, այլ դպրոցներով պէտք է անցնեն 200,000 հոգի: որոշեց Պոլսում բանալ 4000 դպրոց, այն պայմանով, որ եթէ տեղական ուսուցիչները պահասեն, հրաւիրեն Հարևան շրջանները: Միևրին հաշւով մի դպրոցը պէտք է բաց թողնել 50 հոգի: Կանանց դաս պէտք է տրւէր կէտօրից առաջ, տղամարդկանց երեկոյան: Յունւար 1ին Պոլսում բացւեցին 350 դպրոցներ, նրանցից ջաղաքում 220, դասանադութիւնը յանձնեց ուսուցիչներին: Ձմիւռնայում (Վիլայէթ) բացւեցին 700 դպրոցներ, որոնցից 400 Ձմիւռնիայի շրջանում: Դասանադութեան համար իլլանուութիւնները հրաւիրեցին 550 ուսուցիչներ և 150 պահետի սպաներ: Վիլայէթի հետաւոր շրջանները որոշւած է ղրկել 50 ձեռնարկ ուսուցչներ: Ինկիլիթի վիլայէթում բացւեցին 600 դպրոցներ, Ազանայի վիլայէթում 220 և այլն: Ինչ վերաբերում է պետական պաշտօնատերերին և ծառայողներին, նրանց պարտաւորեց ջնուկութեան տալ և վերակայանները ներկայացնել 1928ի նոյեմբ. վերջին: Մասնաւորապէս Ինկիլիթում, Ձմիւռնիայում և Պոլսում, որտեղ կենտրոնացած է պաշտօնատերերի մեծ մասը, ջնուկութիւնները սկսուցին նոյեմբերի սկզբին և վերջացան 25ին: Պաշտօնատերերի նոր այրութիւնը դասերը տրւում էին այն շէնքերում, որտեղ նրանք աշխատում էին: ջնուկում էին Հիմնարկութեան պետերը ուսուցիչները և տեսուչները ներկայութեամբ: 25ին մտացւած նոյն իսկ այն ջաղաքացիները, օրինակ, ուսանողները, որոնք սովորում էին արտասահմանում: Ամէն մէկ ուսանողը ղրկուեց 1 օրինակ այրութիւն և քեթակնութիւն (ընդհանուր արտասահման ղրկուեց 12,000 օրինակ): Այն եւրոպական ջաղաքներում, որտեղ ուսանողները բազմաթիւ էին, կազմակերպուցին յատուկ դասընթացներ: Ժողովրդական դպրոցները աշխատանքը հետապնելու համար նոյեմբ. 7ին դաւառները ղրկուեց 250,000 օրինակ նոր այրութեամբ և մի քանի տասնեակ հազար նոր ջերակապներ: Ինկուլիթից բոլոր թերթերը անցան լատինական այրութիւն: Մտացւեցին մեծ ջանադրութեամբ գրած ջերաններ, բացւեցին մի քանի դպրոցներ և սղարողները դասընթացներ: Ինկիլիթ էին գալիս ուսուցչականներ և ուսուցիչները պատգամաւորութիւններ վերջնականօրէն կազմուեց

գասազրբեր, յատկապէս միջնակարգ դպրոցներէ կամար: Փորձեր էին արուստ օգտուելու առևտրա-արդիւնաբերական շրջանակներէ ժամանակութիւնից (օր. Պոլսի վաճառականները տւին 10,000 լիրա նպաստ նոր այրութիւնի տարածման կամար): Թերթերը չարունակուած էին գանձաւուել ընթերցողներէ թիւ անկման չուրը (օր. Նապլին ճճումհիւրիէթում 12 նոյեմբ.): Վարչապետը այդ առթիւ գրոյց ունեցաւ մամուլի դիւանի պետ Էրջմէնդ-Էրբիսի կնոս, որից յետոյ որոշեց մամուլի նպաստը աւելցնել: Հետեանքը եղաւ աւելի եւս անգուն քարոզ յօդուս նոր այրութիւնի մամուլի կողմից: Պաշտօնաթերթը միտամանակ արտայայտուած էր այն միտքը, թէ օգտուելով բարենորոգումից՝ պէտք է կենտրոնացնել յուսատուութեան գործը ճարտիկների օրինակով: Էնիլիւրի դարձնել մշակական այլ կենտրոն՝ տեղափոխելով այնտեղ բոլոր հիմնական ապարանները և կազմակերպել լայն պետական հրատարակչական և այլն:

Յատուկ յանձնաժողովի աշխատանքները չարունակուած էին: Նոյ. 1ին նա լրացեց հետեւել կազմով՝ Ահմէդ-Ղէվաթ, Իբրահիմ Նէյիւն, Փաղրի Ահմէդ, Ջէլալ-Մախրը, Իբրահիմ և պառակտուած Եսկուր-Կալրի և Ռուշէն Էլչաֆ: Դեկտ. 16ին կանրպակուութեան նախագահ հաստատեց յանձնաժողովի նոր կառուցումը 12 յօդածներէց՝ կազմել ուսուցիչների կամար դասազրբեր, յատկապէս քերական, պատրաստել սպադրութեան կամար նոր թրքական բառարան, փոխարինելով արաբ և պարսիկ բառերը թիւրք ժողովրդական բառերով, ապտուել թիւրք քերականութիւնը օտար ազգեցութիւնից, հրատարակել զրբեր՝ պահպանելով ճիշտ թրքական ուղղագրութիւնը, յեղաբանական ուսուցանութիւն կատարել և այլն: Յանձնաժողովն ունի 7 անդամ նշանակուած կառավարութեան կողմից: Դեկտ. 23ի նիստում յանձնախումբն իր զլխաւոր գոր-

ծը կամարեց նոր թրքական բառարանի պատրաստութիւնը հետեւել հիմունքներով. ա) նոր բառարանը կը տայ թիւրքերէն բացատրութիւնը բոլոր այն բառերը, որոնք պարունակուած են կառուար մեծ բառարանի երկու հատորում, բ) իր այդ աշխատանքի ընթացքում առաջ յանձնաժողովը կը փնտրի թիւրքական բառեր և յետոյ միայն կը դիմի թիւրքացած արաբ և պարսիկ բառերին, գ) եթէ կան համանման թիւրք բառեր, արաբ և պարսիկ բառերը դուրս կը ձգեն բառարանից, դ) եթէ արաբական և պարսկական դիտական բառերը չի կարելի թիւրքերէնով փոխարինել, ընդունել յատկանական ձևերը, ե) որպէսզի բառարանը ճշգրիտ լինի ճարտարագիտական բառերի կամար պէտք է դիմել մասնագէտներին: Այդ հիման վրա յանձնաժողովը որոշեց քել թիւրքերէնից, օրինակի կամար, պարսկական «խանէ», արաբական «խաթիմալ» բառերը հակառակ նրանց տարածուած լինելուն, որովհետեւ թիւրքերէնում կայ համանման ձեւի և զկուլտուակը: Նոյն հիման վրա յանձնաժողովը դիմեց զանազան ընկերութիւնների և մասնաւոր մարդկանց, որոնք արաբական անուններ ունէին փոխել թիւրքերէնի: Օրինակ՝ նաւային ընկերութիւն «Շիրքէթ և Սպիրիթ» առաջարկեց անունել «Քոլլազ իչի Վապուլարի Թուրք անոնիմ Շիրքէթի»: Առաջարկեց փոխել նաև «Պար իլ Շէֆահա», «Պար իլ Բէդա», «Պար իլ Ալթդէ», «Պար իլ Ֆիւհիւն» և այլն: Միւս կողմից յանձնաժողովի որոշումով կամարաարանի խորհուրդը նոյեմ. 20ին որոշեց յատուկ կոմիտէ կազմել և հրատարակել յատուկ բառարանի պետական և ճարտարագիտական բառերի կամար: Յանձնաժողովը որոշեց հրատարակել իր տեղեկագիրները ներքառ լեզուին, բարբառներին և բառարանին:

Այս բոլոր քայլերն, ի հարկէ, անհետեանք չմտցին և լուրջ անդադարձուներ ունեցան թիւրքական կեննքում:

## Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ Շ Ո Ւ Ր Ձ

Կատարել թննուկ՝ Թուրքիոյ տնտեսական կեննքը: Եւ դատապարտած՝ օրէ օր աւելի խճճելու:

Անցեալ օգոստոսին ի վեր, խուճապաւար վիճակի մը մատնուած են և՛ կառավարութիւնը, և՛ առևտրական հրապարակը և՛ մամուլը: Այս վերջինը ապատութիւն չունի ամէն բան բացէ ի բաց պատմելու: Բայց, ինչ որ գրի կառնէ զդուռութեամբ, երկրի մի բացատրութիւններով, կրբմն դառն ակնարկներով, չափն աւելի պերճաբոս է:

Առանց բուն բառերը գործածելու, բոլորն ալ կընդունին որ ճակատագրական անելի մը մատնուած է երկիրը, տնտեսական զեննի վրա: Մինչև հիմա ձեռք առնուած բացառիկ միջոցները ոչ միայն չեն օգնած կացութիւնը բարւոյնելու, այլ և՛ աւելի ծանրացուցած են: Այն աստիճան որ, ահա մէկ ամիսէ ի վեր անդադար դիմումներ կը կատարին կառավարութեան, աղբրագիրներ կը առնան և երթեկները իրարու կը յաշտողեն, և՛ը մը զաննելու կամար: Պահ մը զանգատները այնքան աստիպարան որ, Ըմէթ փաշա սեպտ. 15ին Պոլսի փոխարք օգնանով, կարգ մը տեսակցութիւններ և խորհրդակցութիւններ կատարեց, և սեպտ. 17ին վերադարձաւ Էնիլիւրի, զեկուցեւծ տալու Մ. Քեմալի: Նոյն իսկ խօսքեր կային Ալպ. Մեծ ժողովի արտակարգ նիստի հրապարակ. բայց կառավարութիւնը նախընտրեց յետաձգել և վարչական կարգադրութիւններ ընել, փոխանակ ճառ մտիկ ընելու: Եւ իբրև առաջին ձեռ-

նարկ, փոխեցաւ տնտեսական գործաւարը, փոխելու կամար դեռ մէկ ամիս առաջ եղած կարգադրութիւններ:

\*\*\*

Որոնք են անմիջական պատճառները այս նոր և յարճառն տաքնային:

Կառավարութիւնը բացառիկ միջոցներ ձեռք առած էր, արտաճումները աւելցնելու, ներաճումները պակսեցնելու, կրկին ճարտարաւեստը արբճացնելու, մէկ խօսքով՝ թրքական դրամը պաշտպանելու կամար: Անցեալ աշնան, հաստատուած էր բաժնեցուցակի դրուսութիւնը (contingement)։ Ուրիշ խօսքով, ցուցակներ պատրաստուած էին, իւրաքանչիւր երկու ամիսը անգամ մը ներառելի ապրանքներու մասին: Վաճառականները արտաճումներ չունէին նշանակուած քանակէն աւելի ներաճելու այս կամ այն պարանքը:

Թուրքի վրա ծրագրուած այս ինքնապաշտպանութեան հետեանքը այն եղաւ որ, շատ մը եւրոպական ապրանքներ պակսեցան հրապարակին վրա: Ունեցողը պահեց, իր ուղած գնով ծախելու կամար: Զուենցողը մատնեցաւ անելի, եթէ ոչ սնանկութեան: Հաղաղիտ նիւթեր դարձան չաքար, սուրճը, թէյը և ուրիշ անհրաժեշտ պիտոյքներ: Միւս կողմէ, երկրին բուն արտադրութիւնները, ցորեն, ծխախոտ, բամպակ, թուղ-

չամիչ են. կամ պակաս եկան, և կամ յաճախորդ չգտան: Յորենը կը փոխ Անատոլուի ամբարանոցներուն մէջ, թէ դնորդ չունենալով և թէ փոխադրութեան ծախքերը շատ ծանր ըլլալով: Մինչ Պոլսը միշտ կախում ունի արտասահմանէն, այլուրի Համար: Միւս կողմէ, դրամ չկայ որպէսզի դիւղագին կարենայ վճարել իր պարտքերն ու տուրքերը, որոնք չափ և սահման չունին:

Այս կայութեան մէջ էր որ, օգոստոսի վերջերը, կառավարութիւնը հրատարակեց հետեւեալ նոր հրահանգը, ներածումներու սահմանափակման մասին (թիւ 5 որոշմանակեր) —

Ա. — Ցառաչիկայ սեպտ. 1էն սկսեալ, ամէն ապրանքի, բացի գեղեղէ, բաժնեցուցակի եքսպակայ պիտի ըլլայ:

Բ. — Այն ապրանքները որոնք մայիսը որոշման գրեալ համաձայն առանց բաժնեցուցակի և կամ մասնաւոր արտաճութեանը կը ներածուէին ըստ որոշեալ ցանկի, բացառաբար մինչև սեպտ. 30 պիտի կարենան ներածուիլ, եթէ սեպտ. 1էն առաջ ապարւած են, և այս պարագան հաստատի Առևտրական Սենատիկի կողմէ:

Գ. — Առանց բաժնեցուցակի ներածուելը արտուած դեղերու արժէքը երեք ամսուս մէջ 400,000 սոկին պէտք չէ անցնի:

Դ. — Այն վաճառականները որոնք չամիչ, թուզ, կաղիմ, բազող, գորգ, թիֆթիկ, ակթ, վարդի իւղ և այդպէս կարտածեն, իրաւով ունին հոկտ. 1էն մինչև 15 փետր. 1933, առանց բաժնեցուցակի ապրանք ներածելու իրենց արտածած ապրանքին արժէքին 100ին 50 համեմատութեամբ, պայմանաւ որ իրենց արտածած ապրանքին արժէքը ճշդապ յայտագիր մը ներկայացնեն: Այս յայտագիրը հաստատուած պիտի ըլլայ այս նպատակով յատկապէս կազմուելիք պաշտօնատուներում կողմէ:

Այս պաշտօնատուները մտնակրկիտ ֆնուիթիւներ պիտի ընեն ստուգելու համար թէ արտածած են, տեսակները միջոց են, գինները երապարակին համաձայն են, փոխարժէքը ի՞նչ կերպով գտնուած է:

Որոշմանակերը Հաղիւ հրատարակած, մտահոգութիւնը ստակացուցաւ. հրապարակին վրա: Վաճառականները դադարեցուցին իրենց ապարանքները. իսկ անոնք որ ապարանք ունէին, սկսան քաշել հրապարակէն, որոշուած ապահովութիւն մը վաղը կը վերնայ, որով հոգութեան մասնակցան գործարանատէրները: Անոնց ներկայացուցիչները կը յայտարարէին.

— Մինչև երբ գործարաններու համար պէտք եղած մայիսմիթերը, բաժնեցուցակի դուրս ըլլալով կը բերէին և գործարանները կանոնաւորապէս կը գործէին, մինչդեռ երբ արեւ արեւ նախաժիւթ բաժնեցուցակի դուրս թողած չլլալով, գործարանները չպիտի կրնան աշխատիլ: Իրաւ է որ բաժնեցուցակի ցանկին մէջ շարք մը միւթեր դուրս են, բայց ասանք բոլոր գործարաններու կողմէ գործածուելու համար, ոչ մէկ գործարան աշխատելու համար նախաժիւթ չպիտի կրնայ գտնել: Գործարաններու ձեռքը նախաժիւթ չկայ, որով պէտք պիտի ըլլայ փախել գործարանները: Գործարաններու մէջ 50,000է մօտ գործաւոր գտնուելով, 50,000 ընտանիք անգործ պիտի մնան:

Եղած զանգատներուն ձայնակցեցաւ մամուլն ալ, կամաց-կամաց մէջտեղ հանելով կայութեան բոլոր չարիքները:

«Միլիլէթ», որուն խմբագրապետը միևնույն ատեն Սըրբուի երեսփոխանն է, քաղութիւն ունեցաւ յայտարարելու, իբրև թէ վաճառականներու բերնով.

— «Գործերու վնասը վստահութիւն չի ներշնչեր: Տեստակամ քնդհանուր պոստալով տանի ու վրա ըրած ըլլալով գինները, շատ մը միջոցներ ձեռք առնիմ,

ասկայն տակաւին համեմատական կայունութիւն մը չհաստատուեցաւ: Ոչ միայն օտարներու, այլ և տեղացիներու մէջ ալ յառաջ եկած է այն կարծիքը թէ մեր կրնանք հաստատուն չեն: Այս պատճառով, չեն կորուսար հաստատով մտնել գործի մէջ. որովհետև այսօր որոշուած ապահովութիւն մը վաղը կը վերնայ, որով ձեռնարկու մը չի կրնար գտնել 4-5 տարուս համար ծրագիր մը կազմել, մինչդեռ այս կարգի գործեր արդիմաւոր ըլլալու համար, 5-10 տարուս քնակաման աշխատանք պէտք է: Գիտցա՞յ չկայ թէ ի՞նչ պիտի ըլլայ պետականացման ստեղծանք. պետութիւնը ի՞նչ կան պիտի ընէ և ի՞նչ բան պիտի թողար անհատներու: Լուսնութեան անորոշութեան և տիրող վարամուտէն վախճողները իրենց դրամագումարը պաշտպանելու միջոցներ կը փնտռեն»:

Պաշտպանութեան այդ միջոցներէն մէկն է... արտասահման փախցնել դրամը, ինչպէս կրնան բոլոր երկիրներու ունեւորները: Եւ կամ... արարքը մամուլ չի նշել, որպէսզի հաստատուն արժէքի մը կապուի:

Արդարև, Համաճարակի մը Հանգամանքն առած է «ախարհը մանկներու շինութիւն» Պոլսոյ մէջ:

Հաշիւ եղած է որ 1930էն ի վեր աւելի քան 35 միլիոն սոկի ծախսուած է, միայն իերայի մէջ կատուցուած չէրներու համար: Եւ այստեղ ալ, Թուրք մամուլը վտանգ մը կը տեսնէ ազգային անուանութեան համար: «Այս կերպով, գործարանութեան սահմանուած դրամագրութիւնները քարի և անշարժ գոյքերու կը վերածուին և թէ զպէ՞տն» ի օտարահոգասակ ճարտարապետներու և վարպետներու միջոցաւ, երկրի դրամին մէկ կարևոր մասը արտասահման կը հոսի: Այս Հաշուով, ծախսուած իրաքանչիւր 25,000 սոկիին 10,000 սոկին Եւրոպա կերթայ: (Միլիլէթ):

Առևտրականներն ու գործարանատէրները անդադար ճուայցին, երեսն Հանելու համար նոր հրահանգին անպատեհութիւնները:

— Գործարանատէր մը կը հաշիւէր, — երբ նախանիւթերը մասնէ պատու էին, գործարանատէր մը 38,400 սոկի վճարելով, կրնար 100,000 ըջիւ կաշի ներածել: Մինչդեռ Հիւսն նոյնքան կաշիին մտքատուրքը 42,000 սոկի կրնէ. իսկ թէ՛ միւս ծախքերն ալ հաշիւեց, դուրսը կը Հասնի 61,000 սոկիի:

Ընդհանուր զանգատը այն էր թէ՛ կառավարութիւնը չպիտի հասնի իր նախատեսած աղբիւնքին, քանի որ թրքական ապրանքներու գինները պիտի իջնեն, իսկ ներածելի ապրանքները ընդհակառակն պիտի սղեն:

Նոր հրահանգին համաձայն, կառավարութիւնը արտօնագրերը (վէտիքա) պիտի տար արտասահման ապրանք զրկողներուն, կարելի եղածին չափ շատ ապրանք ծախելու և օտար դրամ ներածելու ասաջադրութեամբ:

Արդ, ստալին շարափներուն իսկ, կատարեալ յուսախորութեան մասնակցան: Առևտրականները իրենք են որ կը բացատրեն. —

— Ճնախ՝ արտաճում կատարող վաճառականներ իրենց ստացած վճարման Հարիւրին 5 կամ 6 տարբերութեամբ չէ որ կը ծախեն, այլ Հարիւրին 15-20 չափ կը փնտռեն: Կարգ մը ապրանքներու վճարմանը Հարիւրին 40, նոյն իսկ 50 տարբերութեամբ կը ծախել և տեսակ մը վճարմանի ստուծախ տեղի կունենայ:

Դուրսէն ապրանք բերելու ստիպուած վաճառականները, վճարմանը համար պահանջուած Հարիւրին 20-40 տարբերութիւնը վճարելու մէջ անպատեհութիւն մը չեն տեսներ, որովհետև ապրանքին գինները ըստ այնմ կը բարձրացան և ի վերջոյ ուղղակի վաճառողը ժողովուրդը կը ըլլայ:

Միւս կողմէ, արտածող վաճառականներուն այդ ձեռք արած ապրանքն իւր անձող միւս երկիրները, Թուրքիայէն ապրանք գնելը զարեցուցած են: Անոնք կը մտածեն որ ապրանքներու գինները աւելի պիտի իջ-

նան և իրենք աւելի աժան պիտի կրնան գնել Թրքական սպրանքները :

Արարներ այս պայմաններու տակ Հարիւրին 10 պակաս գինով իսկ եթէ ապրանք արտածեն, դարձեալ չաճաւոր կրլլան արտածող վաճառականները, որովհետեւ ինչոյէս ըսինք, սողին Հարիւրին 20-30 չարով տարբերութիւն մը կը մնայ: Որով Թրքական սպրանքներուն գիները էլ յաւալու պտտնաւ կը դառնայ այդ դրութիւնը: Մինչդեռ սպրանքներու դիներուն անկումը պատճառ կը դառնայ որ թէչ տրվիլ գտնէ երկրքը:

Այս դրոճնական դժարութիւններէն գատ, կատա վարութեան կարգադրութիւնները միտքերու մէջ աչ շփոթութիւն յառաջ բերին:

Որովհետեւ պետութիւնը միշտ կը միջամտէ տնտեսական գործերու, և միւս կողմէ շատ կը յեղիղէի զգլխականացման բառը, կասկած մը արթնացաւ թէ Յուրբիան ալ զէպի բուշեկով կերթայ: Մանաւանդ որ, ամիսէ մը ի վեր Անատոլու կը դռնէի որու մասնագէտներու յանձնախումբ մը, երկրաբանական, Հողագործական, տնտեսական և ճարտարագործական ուսումնասիրութիւններ կատարելու և կարգ մը ծրագիրներ իրականացնելու համար: (Յանձնախումբին նախագահն է պրոֆ. Օրլով, որ տիրական դեր կատարած է Հնգամեայ ծրագրին պատրաստութեան մէջ և հիմա երկրորդ Հնգամեակ մը կը յորհնէ):

Որոչ հիմքեր ունէր այս փասկածը, և մամուլը պարտք սեպեց լուսարանութիւններ տալ, մտահոգութիւնը փարատելու համար: Երկր փութիւնութիւնն ունեցաւ նաև տնտեսական նոր հարմարութիւն, որուն յայտարարութեան մասին պիտի խօսինք թէչ յետոյ:

Այս ընդհանուր իրարանցումին արդիւնքն այն եղաւ որ, ինչպէս ըսինք, մէկ դիւրեւան մէջ փոխեցաւ տնտեսական գործադարը, և այդ պատշտօնին կողմէս գործի մարդ մը, «իչ» դրամատան տնօրէն ձէլալ պէյն, նոյն ինքն Լամէթ փաշայի փոխարկով: Նոր դրոճա վարը առաջին օրէն իսկ յայտարարութիւն մը Հրատարակեց, «ի բուժումն զայթակղեալ մասաց»: Ամփոփենք էական կէտերը.—

1. Սալեզ կուսակցութեան ծրագրին տրամադրութեամբ, Թուրք Հանրապետութեան Ժողովուրդը կազմած է ոչ թէ առանձին դասակարգերէ, այլ Հասարականութենէ մը որ ճիւղատրուած է դասնործ աշխատաւորներու: Կուսակցութիւնը այդ սկզբունքով կը ջնայ դասակարգային պայքարի փոխարին Հաստատել ընդհանուր ներդաշնակութիւն և Հաշտեցնել Հակասական շահերը:

2. Մեր զլխաւոր նպատակներէն մէկն է կարգաւորել արտաքին աւետուրը:

3. Կուսակցութիւնը անհրաժեշտ կը գտնէ որ երկրին արտածուրը աւելի ըլլայ ներածումէն, կամ գտնէ Հասարակ անոր:

4. Պետութեան կողմէ կատարելիք ձեռնարկները պէտք է չաճաւոր ըլլան:

5. Մեր հիմնական մտածումներէն մէկն է վարկի Հաստատութիւններ Հիմնել փոքր արհեստաւորներուն համար:

6. Մեր նպատակն է վարկ, աժանութիւն և դիւրութիւն ստեղծել:

7. Պիտի պատրաստենք աշխատանքի օրէնք մը, աշխատանքին և դրամադրութիւն միջև ներդաշնակութիւն Հաստատելու համար:

8. Անհատական գործունէութիւնը կիմ ունենալով հանդերձ, պետութիւնը կիմ պիտի կատարէ այն տնտեսական ձեռնարկները որոնց յայտարարութիւնը անհրաժեշտ է ազգային բարձր շահերու տեսակէտով:

Կուսակցութեան ծրագիրը այնքան արդէ է որ, կարելի է խթանիլ թէ ճամբայ պիտի բացի արտաքին այնպիսի պետականացում մը որ կը պետականացնէ երկրին արտադրութեան բոլոր աղբիւրներն ու միջոցները:

ները, չի ճանչնար ազատ առևտուրի և սեփականութեան իրաւունքը, չի թայլարտի որ գործի մասնաւոր դրամադրութիւն կը կիրառեն տնտեսական բոլոր ձեռնարկները: (Հերբում՝ զէպի բուշեկով երթալու կասկածն է):

9. Մեր հիմնական սկզբունքն է պահպանել ազգային դրամին արժէքը: Այս նպատակին կը ծառայէ բաժնեցուցակի դրութիւնն ալ:

10. Պիտի աշխատինք զարգացնել տեղական ճարտարաւեստը:

Այս վերացական և մանաճապատ յայտարարութիւնն յետոյ, նոր դրոճադարը, իբրև շօշափելի գործ, Սեպտ. 18ին Գործադարներու Թորհուրդի վաւերացման ենթարկեց Հրահանգ մը, որով 1. Կը ջնջուին արտածման յանձնաժողովները (ըլտիսա տալու համար) — 2. Կը ջնջուին նախանիւթիւր վրա դրած սնդմուսները — 3. Դիւրութիւններ կը տրուին օտար դրամ (տրվիլ) ստանալու համար:

Կարճ խօսքով, շեղեալ կը Համարել նախորդ Հրահանգը:



Այս բարեփոխումը պիտի բաւէ՞ թէչ մը շարժում ստեղծելու հրապարակին վրա, վերահաստատելու վստահութիւնը — որ նախապայման է նոյն ինքն Մ. Բեմայի յայտարարութեամբ — և օտար դրամ հոսեցնելու զէպի Թուրքիա:

Թող ց սպանեն և յուսան: Իսկ մենք արձանագրենք տնտեսական տաղնայակի Հետ կապած շարք մը երեւոյթներ ալ, որոնք նոյնպէս կը Հաստատեն ընդհանուր կազմաւորումը:

1. Անարարութիւնը տաղնայակ մը մատնած են Այսրւնի նահանգին այգեգործները: Թուրք Թերթերը կողբան որ այս տարի 60,000 թօն խաղող արտադրած է, բայց զինք, որ անցյալ տարի 50 դուռ էր, մինչև 12ի իջած է, ինչ որ ծախքերն անգամ չի գոցեր: Տաղնայակի զբխաւոր պատճառը՝ պարտքերն են: Այլեզործները անոճ առած են, իրենց այգիները մշակելու համար և հիմա չեն կրնար վճարել և ստիպած են ո՛րևէ գնով ծախել իրենց սպրանքը: Միջին Հաւալով, Հարիւր միլիոն ոսկի դրամադրութիւն մը վստահի ենթարկեալ է (խաղող, չամիչ և Թուրք):

2. Պոլսոյ Առևտրական Սենեակին վերջին տարեգիրքը թանկանիլով կապարուցանէ թէ ցածքելու դատապարտուած է Թուրքիոյ Հարստութեան կարևոր աղբիւրներէն մէկը, Թիֆթիքը (այժմադղ): 1931 յուսարին օրսն 150 դռ էր կը ծախէր, իսկ 1932ին 40ի անգամ գնող չկայ: «Ասոր անկում չեն ըսեր, փրուողով կրնան»: Թիֆթիքը արտածելի նիւթ ըլլալէ դարձած է: Անզլխան և Ամերիկան, որ զլխաւոր յաճախորդներն էին, այլ ևս չեն գներ: Աւելցած մթերքը, որ 1931ի սկիզբը 17,000 Հակ էր, այս տարւան սկիզբը 27,000ի քարճացաւ, ինչ որ մէկ տարւան թերթի 3/5 կը ներկայացնէ: 1932ին, երբու միլիոն էր Թիֆթիքի այգեարուն թիւը: 1926-27ին քարճացաւ երեք միլիոնի: Բայց զիւրապին տեսնելով որ մաղէն բան չի չախիր, կը մորթէ այգեքը, գտնէ միւսն օգտուելու համար: Այս ընթացքով, վախ կայ այս այգին սեղն ալ անհետանայ:

3. Բամպակի այս տարւան թերքը շատ թէչ եղած է, երկարատե երաշտին պատճառով: Անցեալ տարի 128,000 Հակ էր, իսկ այս տարի միւսն 80,000 եղած է: (Ատանն՝ 42,000, Մերսին՝ 8,000, ձէպէլը Պէրեթէթ՝ 10,000, միւս շրջանները՝ 20,000):

4. Դատական նախկին գործարար Էստապէյ իր-միլի «Անատոլու» Թերթին մէջ պարզելով դիւրացնելուն թշուառութիւնը, կատարարէ միացնել անոնց պարտքերը և մասնաւորներով դանձել: «Պիւրգ զիւրապին ստիպած է 7-8 դռ ծախել իր արտադրած ծխախոտը»:

5. Գործադրութիւնը կը ծաւալի երկրին մէջ: Բայց որովհետև ոչ պետական, ոչ ալ մասնաւոր վիճակադրութիւն կայ, կարելի չէ ճշակ թիւը: 1927ի մարդահամարին, 220.000 բանւոր կը հաշուին: Հիմա կեն միլիոն կը հաշուեն: Կառավարութիւնը նոր պիտի ձեռնարկէ մասնաւոր հաստատութիւն մը հիմնելու, բանտրներու համար:

6. Տնտեսական գործաւարին հետ մէկտեղ, փոխւեցաւ կրթական գործաւարը: Նոր պաշտօնատարը, Բէշտա Կարիպ, հազիւ դարձի ձեռնարկած, յայտարարեց:

— Դրամ չկայ: Քիչ դրամով շատ գործ տեսնելու ժամանակ է: Ստիպւած են հրեայ սեղանաւորի մը պէս շարժիլ:

Անշուշտ այս է մէկ պատճառը որ, անբաւական դանդիւմ չլըբար» գոյքերու աւարը, այժմ սկսած են քննութեան ենթարկել: Իսկ փոքրամասնութեանց դպրոցներու ելեմէնտը:

— «Օտար և փոքրամասնութեանց դպրոցները շատ մը ծախքեր օւնենալով հանդերձ, անձանօթ կը մնար թէ ինչ աղբիւրներէ կը հայտնաբերեն զանոնք: Այս պատճառով, երկ-երկու ցանկ լրկուած է այդ դպրոցներուն: Մէկուն մէջ ծախքերը, միւսին մէջ հասոյթները ցոյց պիտի տրին մանրամասնօրէն: (Ճիւղմարիլէք):

Եւ «Սօց Փոստա»ն ալ, իր կարգին, կը քրքրէ,— «Ներքէ՞ կը գտնեն դրամը»:

Միև կողմէ, ոչ-թուրք դպրոցներու գլխուն փաթեթած թուրք ուսուցիչները կողքին թէ իրենց վիճարած թոշակը չի բաւեր: Այս առթիւ մասնաւոր մողով մը դումարած և յուշադիր մը յանձնած են կառավարութեան, որ արդէն պատրաստներ կը փնտթէ փոքրամասնութիւնները խորհելու, զոնէ տնտեսապէս: Ախտանչան մը,— փերջերս Գոլտը Համարակալութեան (Տէֆթէրտար) կողմէ մասնաւոր քննիչ մը մանրակրկիտ քննութեան ենթարկեց ֆերայի Կարածոց Լոգարարութեան, Թաղ. Խորհուրդին և էսպեան վարժարանի հաշիւները:

\*\*\*

«Մրբագրեց տալէ յետոյ որսածութիւնը, որուն համաձայն Միջերկրական ջաղաքակրթութեան հիմ-

նայիւնները... Թուրքերն են (նոյն իսկ սնդոցներ կան թէ Յոյներն ալ... Թուրքերէն սերած են), Մ. Քէէմալ ձեռնարկած է բարեփոխելու թուրքերէնը: Արդէն իսկ արշուած է լեզուական համապատմար մը, Գոլիս, Տոյմա Պաղչէի պալատին մէջ, նախազանուրեմամբ «Վապի»ին, որ միևնոյն չէնքին մէջ որոշեց արաբական տառերը փոխել լատիններէն:

Ամբողջ թուրք մտաւորականութիւնը և օտար թրջադէտները մեծ կարևորութիւն կուտան այս համապատմարին, որուն մասնակցելու հարելուած են նաև հայ մասնագէտներ:

Համագումարին գլխաւոր գործը պիտի ըլլայ մաքրել թուրք լեզուն օտար, մասնաւորապէս պարսկերէն և արաբերէն բառերէ և տաաջւածքներէ և ծօտեցնել սկզբնական աղբիւրին (օղուղերէն են): Վիճարանութիւնները դուրէն պիտի լուին անթելով:

Արգաշին յեղափոխութեան լրացուցիչ մասը պիտի կազմէ այս համագումարը, իր առաջարկելիք բարեփոխումներով: Միջոցներ-պիտի մտածուին ոչ միայն լեզուն թրջացնելու, այլ և շարադրութեան ձևը եւրոպականին մօտեցնելու: Թուրք մտաւորականներ և դրագէտներ իրաւամբ կը շեշտեն:

— «Մեր լեզուն այսօր առակ չէ ասեմախտութեան: Ոչ թէ եւրոպական շուրջ գործ մը, փրանսական ամենաքեթի վեպն իսկ անկարծի է թարգմանի քարգմանի իր բոլոր նրբութիւններով: Մէկ նախադասութիւնը հինգ կտոր կրննցնէ. նախադասութեան մեր ձևերը շատ տախտակափակ են: Օտար բառ մը ընդհանրապէս 4-5 բառով կը հասկցնենք: Գիտական բացատրութիւններ մը միայն չունինք, այլ և տակաւին չենք ալ ճշտած թէ ո՞ր աղբիւրներէն և ի՞նչ ձևով պիտի աննենք»:

— «Մեր գրական լեզուն բոլոր քաղաքակրթ և ընդհանրապէս մարդկային մտածումի և տրամաբանութեան շրթալուսին հակառակն է: Անդուող կայ ժողովրդական խօսակցութեան լեզու և մեր արևտակալ բարբերներէ քերականութեան միջև: Մեր քերականութիւնը հակառակ է մտածումներու բնական շրթալուսնութեան»:

Ապացոյց մը ևս, թէ զեմալպետութիւնը այս համբով ալ կը դիմէ դէպի թունգ ազգայնականութիւն և արդիացում:

## Կ Ա Ր Մ Ի Ր Գ Ծ Ի Ց Ն Ե Ր Ս

Վերջին երկամսեակի ընթացքում արձանագրելիք շատ երևոյթներ կան խորհրդային կենտրոնում, որոնցից առաջին հերթին առնենք Կոմկուսի ներքը կատարուող խմորումների ծայրայեղ սրումը: Ըստ երևոյթին, ընդդիմադիր արձանագրութիւնը Ստալինի անձնական քաղաքականութեան դէմ այնքան ուժեղացել է, որ հերթը հասել է գործի: Յամառ շշուկները Ստալինի հիւանդութեան կամ հրատարման մասին անհիմն չեն. նրա դիրքը բաւական խախտած է: Կոմունիստական այլազան հաստատները, ըստ երևոյթին, միացել են Ստալինին Ստալինի ստալինի կամ նրա քաղաքականութիւնը փոխելու շուրջ: Կոմկուսի կենտկոմի յառաջիկայ լիազմար նիստը կամ կուսակցութեան համագումարը, թուում է թէ, պէտք է քերին որոշ անակրնկալներ: Ոմանք կարծում են թէ պէտք է փոփոխել Կոմկուսի գլխաւոր դեկլարութիւնը: Ուրիշներն են-թաղերում են, որ Ստալինը կը բուն դիրքում է ճամբան և նորից դուրս կը դայ յաղթական:

Կոմկուսի ներքին շարժումները փոխելու սրումը արդիւն է տնտեսական այս ահռելի կացութեան, որի մէջ ընկած է խորհրդային իշխանութիւնը: Այլևս ամենքի համար պարզ է, որ հեղափոխութեան ստալինի է, և խորհրդային Միութիւնը ոչ միայն «Ամերիկային չէ հասել», այլ ընկել է անտեսական անիշխանութեան դիրքը: Միև կողմից, տարւայ ներքը շատ հետու է ակնկալուածից. կոյնոզացման քաղաքականութիւնն ու երաշար Ռուսաստանը դրել են սովի ստղ: Հազարութեւումներ ծրարելը չի իրագործուած: Հաղորդակցութեան միջոցների ջալալումը շարունակուած է յարաճուն: Արտածումը աւելի է աւելի կրճատուած է: Ձեւ-վոնցը անընդհատ ընկնում է: Ամէն կողմ դուրս է բարձրացնում «գաղափարային թշնամին»: Կենքի պայմանները դժարացել են չափից աւելի: Ժողովրդի դժգոհութիւնը սահման չունի: Իշխանութեան հեղինակութիւնն ընկած է աւելի քան երբեք: Իրար յաջորդող ու իրար խաչաձևող կամ հակառող օրէնքներն

այլևս չեն դորձադրուած և ցոյց են տալիս, որ իշխանութիւնն էլ սկսել է կորցնել իր ոտքի տակի հողը: Այս և ընդհանուր պատկերը խորհրդային աշխարհում ոչ միայն արտասովորանի հակախորհրդակախանները նկարագրութեամբ, այլ և բոլշևիկեան մամուլի հարգըրած անհաշիբ փաստերով:

Ողորդ գծերով նոյնն է վիճակը և Հայաստանում: Առնենք, օրինակի համար, հացամթիւրումների ընթացքը, որ խորհրդային իշխանութեան համար ճառարհագրոյն խնդիրն է ներկայ շրջանում»: Հակառակ Կոմկուսի և կառավարութեան ամենավճռական միջոցների, հայ գիւղացիութիւնը բոլոր ներքին և աններքին հնարքներով աշխատում է չտալ իր հացի միջերը: Այսպէս, ճամբողջ Հայաստանում օգոստոս ամսուայ պլանը կատարած է 27,2% ու՛ղ, իսկ ճառանքին շրջաններում աւելի խալտայակ կերպով է յետ մնում: Կոտայքում օգոստոս ամսում նախատեսուած 2000 ցնտուների փոխարէն միջերած է 318 ցնտուներ, Ախտալում՝ 1000ի փոխարէն 283 ցնտու... «Օգոստոս ամիսը փակուեց խալտուակ ճեղքածով»։ («Ուշ» 2 սեպտ.)։ Հացամթիւրման զարկածը վիժման նպատակ է և երաշուք, որով բունած են Հայաստանի որոշ շրջաններ:

Գիւղացիութիւնը գերազանց է փչացնել իր աշխատանքի արդիւնքը քան թէ յանձնել կառավարութեան: Այդ հողի վրա վերջերս խիստ յանախաղէպ են դարձել Արտակարգային քշմանա՝ վնասարարութիւնները: Այսպէս, Բէշլէջէնցում, Չիլում և Ուշիկ գիւղերում, օգոստոս 22ին, «կուլակային-հակախորհրդակախան տարրերը» այրեցին կոլտնտեսութիւնների հացի ու խոտի դէգերը: Այդ գործի դատավարութեան համար սեպտ. 6ին Գարագազի մեկինք Գերագոյն Գատարանը:

Վարդաշապատի Գրամփա գիւղում այրւած է կոլտնտեսականների 70 սայլ հացահատիկի դէգը: Աշտարակի շրջանի Գարշաձբ գիւղում հրդեհուած է կոլտնտեսութեան 5000 խուրճ խոտը: Աղբաբայի շրջանի Ունաշլի գիւղում այրւած է կոլտնտեսութեան 70 սայլ խոտը: Ստեփանաւանի շրջանի Կուրթան գիւղի կոլտնտեսութեան համար և ցորենը «գիւղիները» չանձել են որպէս խոտ, հոտեցրել են 5 փութ պանիրը և գիւղերը թափել են: Մարտունու շրջանի Աղամիսան գիւղում «սկսեցին ոչնչացնել համայնացած անասունները» ոչխարը, եղը, կովը և այլն: Մորթիլու և վաճառելու հետեանքով պակասեց բաւականաչափ անասունը: Օգոստոս 12ին այրեց Ախտալի շրջանի Ձաղաչի կոլտնտեսութեան 40 սայլ խոտը: Արագածանդի կոլտնտեսութեան 21 ձիուց 14ը անխնամ թողնելու հետեանքով փչացել են: Կոնակներին վերքեր են առաջացել, մէկը կուրացել է, միւսի ոտն է վնասուել. չորքը սատակել են անասունը, մէկը՝ ձորակ, իսկ մէկին էլ գայլերն են պատանոտել: «Ոչ ոք պտտախախտատու չի գտնուել իրեն»: Աղբաբայի շրջակներում «22 միերից համարեա ամենքը կորցրել են իրենց աշխատանակութիւնը»: Վարդաշապատի շրջանային կոմիտեմ միերը չուժապաղու են եղիլ և չեն կարողանում աշխատել: Գիւղեանի շրջակուտնտեսութիւնը ունի 6 ձի, ճառիայն կեր չունի, միերը քայցած են մնում»: Անխնամ վիճակի մէջ են և Ալլահ-Վերդու շրջանի 3000 միերը...

Մորհրդային թիւթերից քաղած այս փաստերը կարելի է շարունակել անվերջ: Ժողովրդական հարեւուտեան անխնամ վառանդն ու փչացումը խորհրդային կենտրոնը դաքնել է սովորական երևոյթ և անգամ ամենադժուար պատիժները անգործ են առաջն առնելու: Նման կարգի երևոյթ է և անտնտեսավարութիւնը, որի անհաշիբ օրինակներով լեցուն է խորհրդային իրականութիւնը:

Այսպէս, Արեւանդարապոտում շարունակուած է ապրանքների փչացումը. օգոստոս 12ին Վրաստանից դալիս է մի վազան պտուղ ու բանջարեղէն. «յատուկ յանձնա-

ժողովը բաց անելով վազանը պարզեց, որ 70 արկղ տոմատ և 128 արկղ տանձ փչացել է 60-70% ու՛ղ»: Օգոստ. 15ին դալիս է մի ուրիշ վազան, որ Վրաստանից Լենինական հանումն է... 12 օրից, աւելի ուշ քան Քալին-Փորնիայից Փարիզ. «վազանը Լենինականում բանալիս պարզեց, որ տոմատ փչացել է 80% ու՛ղ, 90 արկղ տանձ՝ 78% ու՛ղ, 17 արկղ վազան՝ 100% ու՛ղ, 4 արկղ իւնձոր՝ 10% ու՛ղ, բացի այս բոլորից՝ մրկեղէնով 15 լիքը արկղ կտուրած»: Օգ. 20ին հանում է մի ուրիշ վազան՝ «ի՛նքը մրգեղէնով»։ «դատարկելուց յետոյ, պարզուած է, որ 224 արկղ դեղձ փչացել է 85% ու՛ղ, իսկ 237 արկղը՝ 95% ու՛ղ»: («Ուշ» 3 սեպ.):

Ի՞նչ են «հաւաքանդում» այս երևոյթները — որ Հայաստանի տնտեսութիւնը մնացել է անտէր, և ժողովուրդը՝ գիւղացի թէ քաղաքացի թշնամու աչքով է նայում նրան:

Որ ժողովուրդը թշնամի է խորհրդային տնտեսութեան, հաստատուած է և «քամրակի ճակատը»: Հարայ-հրոցով ցանեցին 28,000 հեկտար բամբակ, փոխանակ որուած 30,000ի: Անդրերկրում որուեց, որ ամբողջ Անդրկովկասի 170 հազար տոն բամբակ Հայաստանում պիտի հաւաքել 15 հազար տոն: Այս դուժարի մէջ չի մտնում «կուլակային ունեւոր տնտեսութիւններից հաւաքելիք բամբակը»: Հասաքման ժամանակը որուեց՝ սեպտեմբերին՝ 10%ը, հոկտեմբերին՝ 55%ը, նոյեմբերին՝ 35%ը:

Այս, սակայն, զլլանք է, իսկ իրականութիւնը: Յուլ. 23ին «Մորհրդ. Հայաստան»ը պահանջում է. «բոլոր ուժերը դեպի դաշու», որովհետեւ «բոլոր ագրոպունկտերից ստացուող քաղցամթիւ փաստերն ահապանում են այն մասին, որ չոռ հրահանգիւնը անարդէլ տարածուած է բամբակի դաշտերում»: «Ի՜նչ մինչև օրս էլ և ոչ մի շրջանում, ագրոշրջանում ինչպէս հարկն է չի կազմակերպուած պաշարը բամբակի վնասատուների դէմ»: «մնչպէս հարկն է չի կազմակերպուած և քաղհանն ու սոսոգումը»: Յուլիս 30ին, Համկոմկուսի քարտուղարն ու չեկայի պետը անձամբ այցելում են բամբակացան շրջանները, և Ունաշլու հաստատում է, որ Ղուրբուղուլիի շրջանում «բամբակի մշակումը լաւ չի կազմակերպուած, յատկապէս առաջին քաղհանը, ջուրը ժամանակին չի կտարարած, որի հետեանքով բամբակը վատ է անել... Կրտսէի բոլոր ագրոշրջաններում բամբակը արդէն վարակած է չոռ հրահանգիւնով, իսկ պաշարը այդ սպառնացող վտանգի դէմ միանգամայն թոյլ է կազմակերպուած»: Նոյն վիճակը արձանագրեց Ղամարտում Հայկոմկուսի երկրորդ քարտուղար Օթեանը: Այստեղ շուտ արտեր մնացել են չլրեւած, ստացեց քաղհանի. չոռը համարարած բնատուրութիւն է ստացել: Նոյնն է դրութիւնը և Վարդաշապատում, ուր «անփութ», թիւրերաւատակ պերսերմուձների շնորհիւ, ջուրն ուշ մտտակարարելու, ժամանակին չքաղհանելու և վատ հողերում բամբակ ցանելու հետեանքով փչացել է 608 ու կէս հեկտար բամբակ»: Մի շարք խորհրդատնտեսութիւններում և կոլտնտեսութիւններում բամբակի գործը «մատուած է ինքնահոսի և փչանում է»:

Այսպէս, «Ղուրբուղուլու կոլտնտեսութեան 105 հեկտար բամբակը չմշակելու հետեանքով փչանում է: Մնացած 240 հեկտ. մշակած է, բայց 4րդ քաղհանն ուշացնելու պատճառով մոլայտոտերը բարձրացել են ամբողջապէս ծածկել են բամբակը: Բամբակի ողջ տարածութիւնը լրանած է չոռով... անասունները փչացրել են մտաւորապէս 40 հեկտար: Նոյն դրութիւնն է տիրում Ջանֆիգալում, Մարգարայի ենթաշրջանում, Կիլիկիայում և մի շարք այլ գիւղերում»: «Դատարարու գիւղի... բամբակի մեծ մասը չքաղհանեց և վերածուեց խոտաբերի, իսկ մնացած բամբակի մոլայտոտերն այնքան են աճել, որ ծածկել են բամբակը... Անտիթիթար դրութեան մէջ է նաև սոխի ցանքի մշակութիւնը. մոլայտոտն ամբողջովին ծածկել է ցանքը...»

կողմնակալության դարձնել մեկ ամսից առելի է մնացել կարճ ատանց կայսրու, որը փշաջնում են անասունները»։ (ՁՊ. Հ.՝ 23 օպ.)։

Այսպիսի աղաղակի դաստերով լին են խորհրդադային թերթերը։ Եւ դարձանայի չէ, որ Հայկումկուտի ղեկավարութիւնը մի քանի անգամ ահազանգ է հնչեցնում բամբակի մշակութեան «անբարար» վիճակի մասին ու խիստ «միջոցառումներով» աշխատում է դրութիւնը փրկել, բայց անօգուտ. Ա. Պանջեանը խոստովանում է, որ «բամբակն այս տարի շնորհիւ ջրային օրջանների, ՄՏ կայանների և կոլտնտեսութիւնների վատ աշխատանքի, ժամանակին ջուր չտացաւ։ Կուլտիվացիայի և ջրելու աղաղակող թերութիւնները հարուստ հող ստեղծեցին բամբակի վնասատուների աւերիչ աշխատանքի համար. վնասատուների, մանաւանդ չառի դէմ պայքար կազմակերպւած էր միանգամայն անբարար»։ Վատորակ ու թերի աշխատանքի արդիւնք արդէն տեսնում ենք այսօր. բամբակի ամենաբերքաւոր դաշտերի մի զգալի մասը գտնուում է ամենաանախանձելի դրութեան մէջ. չորը շնչին չափերի է հասցրել այդ դաշտերի բերքատուութիւնը»։ (ՁՊ. Հ.՝ 6 սեպտ.)։

Այսպէս անմիջապէս է կացութիւնը «սոցիալիստական դիզիթ ֆրոնտում», բայց առելի լաւ է զարգեցում։ Ահա Երեւանի ու Լենինականի քաղաքային շինարարութիւնը. «անցած վեց ամիսների արդիւնքները ցոյց են տալիս, որ 1932թ. թաղաքային անտեսութեան և բնակարանային շինարարութեան պլանները խախտուակ կերպով թերակատարուած են»։ Ե՛նչեքը մտնում են կիսատ, ամիսներով աշխատանք ընդհատուած է, որովհետեւ աշխատող ձեռքեր, շինանիւթ, աւազ կամ ցար է պակասում։ Հայաստանում ցար չի ճարուած... Միւս կողմից է թէ ովկիանոսում ջուր չճարել։ Անտեսութեան հետեւանում էլ արդիւնքով զարկածով նախատեսուած մէկ տոն կրի արժէքը 31 բուրջու փոխարէն շինարարութեան վրա նստում է 65թ. 75 կողպ., մէկ խորանարդ մետր աւազը 9թ. 40 կողպ.— փոխարէն՝ նստում է 20 բուրջի (10 դոլար)»։ Նոյնպէս և «Հայկառուի խառնուրդի կիսամեակի շինպլանները կատարելու միայն 45% ուղի»։ Անվերջ բանտների պակաս է գրացուած. 1,042 բանտերի փոխարէն Երեւանի շինարարութեան մէջ առաջին կիսամեակում աշխատել է միայն 553 բանտը։ «Շինարարութեան մէջ եղած 48 մեքենաներից օգտագործուել է միայն 4ը, այն էլ ոչ լրիւ բեռնատրուածով, իսկ յունւար ամսից ստացուած 6 այլ մեքենաներ բակում փշաջնում են արել և անմշակ տակ։ Անպատասխանատուութիւնն այն աստիճանի է հասել, որ ստացուած 2 վագոն ցեմենտը դարձում մնալով առի՛ փոխում է մեծ չափով»։ Տրանսպորտի «200 միւս օգտագործուել են միայն 100ը»։

Կարծում էք այս «խայտառակութիւնները» դաշնակ-հակախայտառակութեան զրկարուութիւնն» ր են։ Կովկասի պաշտօնաթերթի «Պորհրդ. Հայաստան» է դրողը 16 օգոստ. խմբագրականում։

Առելի կամ պակաս չափով դրութիւնը նոյնն է Հայաստանի արդիւնարեւութեան բոլոր ճիւղերում. «առաջին կիսամեակում, Հայաստանի արդիւնարեւութեան գրկթէ բոլոր ճիւղերում պլանները թերակատարուած են»։ Աւանձնապէս «լրդողիցուցիչ անտեսաւախարութիւն» դրութիւն ունի Լեւոնգաւորում։ Ուստի որոշած է օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները դարձնել «ճեղքուածներ» և կուրորտային գործում։ Արգիլի հանքերի ջրերում «անտեսաւախան համար ծախսուած է 25,000 բուրջի, մինչդեռ անկաւած հարգարուր ծառերը մեծ մասամբ չորացել են, անխնամ թողնելու հետեւանքով։ Մարկանոցի շրջանակները զանգուած, թափուած են, իսկ ծաղիկները խնամքը մատնած է անուշադրութեան։ Ծանապարհները լցւած են մեծ ու փոքր

զարերով, խնով ու փռով»։ Ծանձ, փռոչի, աղտոտութիւն. ներկայացում, սինեմա չկայ. «առատուն չի խօսում»։

Նոյնը և Դիլիշանում՝ «անասնի անբարեկարգ և հակաատղջապահական դրութիւն»։ «Դեռ 1928 թ.ին Անդրադայի սկսած մեծ սանտարիայի շէնքի կառուցումը (Գոլովիտոյի մօտ) մի քայլ անգամ ստալ չի դնացել և մինչև օրս միայն հիմքն է դրւած»։ (ՁՊ. Հ.՝ 24 օպ.)։ Իսկ այս 4 տարւայ ընթացքում զանի՛ր սանտարիան է շինել Վրաստանում։

«Ճեղքուած» և Երևանի արամվայի գործում։ Որոշուած է արամվայի շինութիւնը աւարտել այս տարւայ հոկտեմբերին, բայց մինչև օգոստոսի վերջերը, «ՁՊ. Հ.»-ը վկայում է, որ «աշխատանքները, յատկապէս վերջին շրջանում, դանդաղուած են գլխաւորապէս աշխատանքի վատ կազմակերպման հետեւանքով»։ Այսպէս, մի շարք տեղեր ճանապարհի հողը փորւել է պէտքէն առելի, որով զօրի կառուցումը կանգ է առել և ահադին իրեն է վատնել փորւածքը լեցնելու համար։ Ելեկարագծի սինները սկսել են անել Արդիւնայի փողոցը սալատակելուց յետո՛ւ և ստիպուած են եղել սեղ սեղ քանդել սալայատարը։ Բանտների ճաշարանի խոհանոցը երկու անգամ շինել ու քանդել են։ «Ճրամվայի պարկուտ սիրում է թափախածութիւն և անպատասխանատուութիւն, զլխաւորապէս շինանիւթերի պահպանման և նպատակայարմար գործարման խնդրում։ Անխնայ փշաջնում, ոտի թակ տրորում են ցեմենտը, կիրը, աւազը, կտորում և սառ անգամ առանց թոլլուտութեան «թեցնում» ու գործածում իրրե վառելանիւթ պատգարակները, տախտակները և այլ պլանների անտեսանիւթերը»։ «Ճրամվայի կառուցման ամենահիմնական աշխատանքներից մէկն էլ ռեյսերի միացումն ու գործումն է, բայց մինչև այժմ գորւած 200 ռեյս 2500ի փոխարէն և դեռ մտնում է զօգելու, միացնելու և ամբարջնելու 2300 ռեյս»։ Պատճառը այն է, որ «Մոսկուայից մինչև այժմ 3000 բամբի տեքստիլ փոխարէն ստացւած է 300 բամբի և երկրորդ ամիսն է, որ շտապ կերպով պատկրւած 400 բամբի տեքստիլ գտնուած է ճանապարհին և դեռ մինչև օրս չի հասել տեղ. այդ պատճառով մէկ և կէս ամիս է, որ ռեյսերի զօգման աշխատանքները կանգ են առել»։ Միտ մեծ է բանտների պակասը. վերջերս Խուստանի հեռուոր թաղաքներից «հաւաքագրուած ու բերել են բանտները, բայց սրանք էլ չեն աշխատում, սառ հիւանդ են մեանում և այլն»։ (ՁՊ. Հ.՝ 26 օպ.)։

Կրկնում է Չորագէսի պատմութիւնը։ Չորագէտը մայիս մէկին գործի պիտի գրէրէ։ Օգոստոսին Չորագէսի պետ ինժ. Տէր-Աստուածատրեանը յայտնել է Անդրդ. Հեռուոր. Գործակալութեան ներկայացուցչին, թէ ելեկարակայանի աւարտման ժամանակ դեռ յայտնի չէ. «Չորագէսի առաջին ագրեգատի արդէն կարելի ընկած աշխատանքը վիժել է. տուրբինի սեպտեմտային դարչապարը և կուլուրը դարձնալ հալուել են։ Ծոտաքննութիւն է կատարուել։ Կուլուրը շտապ կերպով ուղարկուած է Թիֆլիս նորոգելու», բայց երբ է դալու, յայտնի չէ։ Տէր-Աստուածատրեանը մատնանշում է «Լենինգրադի մետաղագործարանի բացառիկ անուշադիր վերաբերմունքը դէպի մօտաօտի աշխատանքները»։ (ՁՊ. Հ.՝ 8 օպ.)։

Լայն «ճեղքուած» և կրթական գործում։ Ինչպէս յայտնի է, Հայկենտգործկոմի 1931թ. օպ. 3 որոշումով Հայաստանում անդրադառութեան վերացումը և ընդհանուր կրթութեան կիրառումը պէտք է կատարւել ամենաուշը մինչև 1933թ. յունւար 1։ Արդ ինչ է արուած դրա համար։

Այս տարւայ օգոստոս ամիսն էլ յայտարարեց ուսումնական տարւայ նախապարտաւորութեան հարաժառի միամտեակ, գլխաւորապէս շէնքերը և զարդաական պիտոյքները կարգի բերելու նպատակով։ Ահադին

այժմուկ հանւեց, անհաշիւ թուղթ գրեց կենտրոնից շրջանները և շրջաններից կենտրոն: Արդէ՞նքը:— Սեպտեմբերի սկզբին ուսումնական տարին արդէն սկսած է, բայց անցեալ տարւոյ այն այս տարի էլ դպրոցական չէնքերի պակասի պատճառով շատ էրեւաններ դուրս են մնացել: Անցեալ տարի կիսաւարտ չէնքերի 60% 0 աւարտուեց, զորից է նոյնն է վիճակը և այսօր: Երևանում այս տարի աւելացել է 1500 աշակերտ, բայց «ոչ մի նոր չէնք դեռ պատրաստ չէ» և դպրոցական պարապմունքները պէտք է տեղի ունենան 4 և աւելի հերթով: «որոշ դպրոցների առանձին խմբերը պարապում են լացօղակ կամ նոր չէնքերի նկուղներում»: Արթիկի շրջանի 48 գիւղերի դպրոցական չէնքերից ոչ մէկը չի վերանորոգւել, նոր էլ չի շինւել: Կոտայքը անպատրաստ դիմաւորեց ուսումնական տարին: Նոյնպէս Բաւարդէշարը, Դիլիճանը, Աշտարակը, Աղբաբան, Լենինականը, Սիսեանը: Սիսեանում առ 5 սեպտ. սպիտակում էր 32 ուսուցիչ: Աշտարակից գրում են, թէ՛ «համարեա թուրք զիւղերի դպրոցները չափազանց մեծ կարիք են դրում նստարանների, սեղանների, վատարանների, իսկ դպրոցական չէնքերը, նստարանները, սեղանները և դպրոցական գոթը փշանում են»: Դիլիճանում «դեռ կան մի շարք դիւղեր, որ դպրոցական չէնքեր չունեն»: «Ալբաբայի, Ապաբանի, Ծամաշիւղի և մի շարք այլ շրջաններում դպրոցական չէնքերը

վերածւել են դրասնեակների, պահեստների, խանութների, անշամ քարանաստանների ու դռների»: («Պ. Հ.» 27 օգ.):

«Ըստ Ղուծողկոմատի տեւաշների՝ դեռ 1931թ. շրջաններում և բազաքներում կար մինչև 200 կիսաւարտ դպրոցական չէնք, որի մի մասը պէտք է աւարտւէր 1931թ., բայց 1931թ. դպրոցական չէնքերի կառուցման և թերիների աւարտման պլանը մեծ մասամբ չկատարուեց... Այս տարի Հայաստանի 20 շրջանում կառուցուել և աւարտուել է 105 դպրոցական չէնք՝ 482 սենեակով և կիսաւարտ է մտում 150 չէնք 695 սենեակով»: («Պ. Հ.» 5 սեպտ.):

Ահա դպրոցական գործի ընդհանուր պատկերը Հայաստանում խորհրդային մասուլի իսկ տեւաշներով: Այսպիսի պայմաններում կարելի՞ է երազել ընդհանուր կրթութեան իրականացման և անդրադիտութեան վերացման մասին մինչև... 1933թ. յունւար 1:

Այսքան մտալի է Հայաստանի այսօրայ խորհրդային իրականութիւնը: Ի՞նչ արժէք ունին իրենց իսկ ընդմիջ առաջ ընկող այս «վարդիցուցիչ», այս «խալտատակ» փաստերի հանդէպ նկատուող հաս ու կտոր լուսաւոր կէտերը, որոնք անգոր են փարատուու բուշիկեան խաւարը, որ թեզդիլ թանձրութեամբ պարտուրել է երեցս նահատակած մեր դժբախտ Հայրենիքը:

Մ Ե Ր Զ Ո Ն Ե Ր Ը

**Տէր վարդան ՆԱԼԲԱՆԴԵԱՆ**

Քահանայ և յեղափոխական, փոթորկալից կեանք — իսկապէս որ տարօրինակ է թւում. սակայն, Հայ դարթծօքի և ազատագրութեան ուժգին տենչը տապալել է դատակալարային անհաշու շերտուորման պատե՛ղը և մեծատուն, հասարակ բանուր թէ՛ ընչպագուրկ, բոլորը, տարւած ու արեցած գերագոյն գաղափարի վեմ և անխորտակելի շնչով, ուրանում էին անձնական ամէն վայելք գնում էին, անձայր քարաւանի նման, դէպի Հայ Ազատագրութիւնը:

Տէր վարդան Նալբանդեանը Հայ ազատագրական պայքարի առաջին սերնդից էր, ծնւած Ալլաքիկ Սորադէր գիւղում 1858 թւին: Բաւական հարուստ ծնողների գաւակ էր. հայրը գիւղի տանուէրն էր ու որոշ համարում ունէր իրենց դիւլատէր Եարաթ քէկի աչքում: Իր մանկութիւնն անց էր կացրել գիւղում, այն շրջանին, երբ վարազում Որիմեանը հրատարակում էր «Արծի վասպուրականին», որի շնչի տակ գաստիարակուում էին ժամանակի երիտասարդները: Ծնողները փոքրիկ Ուլաթին ևս (այսպէս էր Տէր վարդանի անունը, դեռ քահանայ չձեռնադրւած) տանում են վարազ ու տալին Որիմեանին աշակերտ: Փոքր էլ շատէ զբաղէտ դառնալով, գիւղացոց ցանկութեամբ 1880ին, տակաւին երիտասարդ Ուլաթին ձեռնադրում են քահանայ—վարդան անունով — Որիմեանի ձեռքով:

Այդ ժամանակներից Հայ յեղափոխական ուղին դեռ իր սողմային և սկզբնական շրջանն էր արդում, և Սորադէրը որպէս սահմանադրիկ իւրից, 1888ից սկսած դառնում է մի տեսակ հանրաւան անձնուրաց յեղափո-

խակներին համար: Յեղափոխական առաքեալները դէպի երկիր անցնելիս, առաջին հանդուանը Սորադէր գիւղը և յատկապէս տանուէր Նալբանդեանի տունն էին դարձնում: Ու այդ մի պատե՛հ առթի՛ հր, որ երկուստարդ քահանայն ստողը ու յանդուակ կրծքի մէջ վառէր գաղափարական կայծը ազգային ու յեղափոխական մաթուր շնչով:

Յեղափոխական առաքեալներից առաջիններն, որ իջևանում են Նալբանդեանի տանը, լինում են Դաւիթն ու Միհրանը (արմենական): Ապա պալիս են մէկը միւսի յետեից մի շարք ուրիշ գաղափարական ուսմիտաներ, ինչպէս՝ Աաթօն, Ջալալը, Իւլիանը, Զէյթունցի Հալին և այլը, որոնք հանդիպում են Տէր վարդանին տունը: Սրանք արդէն դաշնակցական առաքեալներ էին, որոնց շատ սիրով և ուրախութեամբ ընդունում ու հիւրասիրում էր Նալբանդեանը:

Անուշա, այդ բոլորն սկանառես էր տաճիկ կառավարութիւնը: Նա արդէն աչքի առաջ ունէր Նալբանդեանի տունը և միայն յարմար առիթի էր սպասում: Եւ առիթն չուշացաւ:

1892ի վերջերին երկու դիմեալ քրդեր ցորեն են բերում Նալբանդեանինց ջրաղայն աղալու: Աղում են և յետոյ իմում են քարեր կոտորւմ ու իրենց այլուր բարձելով երկերին՝ ճանապարհ են ընկնում: Ջրաղացպանն արագ լուր է հասցնում Տէր վարդանին, որ առանց ժամանակ կորցնելու վերցնում է ուրազ ու վազում հասնում է քրդերին: Փոխադարձ սպանալիքներն ու հայտնաշնչները հասնում են այնտեղ, որ զիրուքը հրազարդ քալում է խիեղու Տէր վարդանին, սակայն, քահանայի ուրազի հարածը աւելի շուտ է հասնում իր նպատակին. քերուրը անուշա փուում է



գետին: Միև ընկերը փախչում է՝ աւարը թողնելով Տէր Վարդանի ձեռքը:

Չկարողանալով տոկլալ հայաձանքներին, 1893ին, իր ամբողջ կազմով ու ընտանիքով Տէր Վարդանը ճանապարհւում է պարսից սահմանը՝ Սալմաստ անցնելու նպատակով: Սալայն, սահմանադիրին ձերբակալուում է սահմանի մեղերին, որ ապրում էր սպանած քրդի եղբոր տանը: Դրուժինը ծանրանում է, բայց Տէր Վարդանի 700 ոսկին կուրացնում է միւղիբին, որ քահանային իր ինչքով սուղփառօք ճամբայ է դնում պարսից սահմանը: Այդ օրը գիշերում է Սալմաստի Դերիկի դիւղում, ուր ապրում էր գաւառի առաջնորդ Բ. վրդ. Քաւաքալեանը, այդտեղ է լինում և Սարօն: Յաջորդ օրն անցնում է Մաշլամ և վերջնականօրէն հաստատուում ու քահանայութիւն է անում Մահլամում՝ երբեք ձեռքից բաց չթողնելով զէնքը: Պատարապի ժամանակ անդամ տորճանակը աւետարանի հետ կողքկողքի էր դնում: 1897թ. մասնակցում է Խանասորի արշաւանքին, որից յետոյ, ի շարս ուրիշ ընկերների, պարսից կառավարութեան կողմից հետապնդուում և հայաձանքի է ենթարկուում և Տէր Վարդանը, որ 1897ի վերջին փախչում է Քաւրից, այստեղից էլ ծրարաւ, Զորեպանի հագուստով անցնում է Կովկաս:



նում է Կովկաս, ուր և հաստատուում է ընդմիջ: 1908թ. ներկայանում է կաթողիկոս Իգիլբրեանին, որը նորից նրան քահանայութեան ծուխ է տալիս Փոթիի շրջանում, տանձհայտ դաղթիականների պահանջմամբ: Այստեղ նա ներթոււմ է առաւելագէս պարոջական դործին:

Համաշխարհային պատերազմի հէնց սկզբից Տէր Վարդանը նորից շարժուում է տեղից: Այս անգամ նրան տեսնում ենք Անդրանիկի կամաւորական գնդում, որպէս հասարակ զինուոր, իր գաւակների հետ միասին: Մասնակցում է շատ ընդհարումների և 1915 թ.ի ճակատամարտում Քալիլ բէլի դէմ, վերաւարում է Դիմանում և սեղափոխուում թիֆլիս, պետական հիւանդանոց: Իժպիլուց յետոյ կրկին վերադառնում է ուղղադաշտ և մինչև 1918թ. մինչև Հայ Հանրապետութեան ստեղծումը կամաւորական մարտիկների հետ փութորկայտից ու վտանգաւոր կեանք է ապրում, մերթ Անդրանիկի մօտ, մերթ Չէյթուցիների գնդում Իլդիբի շրջանում, իսկ Հանրապետութեան ըստեղծման ժամանակ էլ Երեւանում, որտեղից գրում է իր որդուն. «Ալրդիս, մեր այսքան արիւն, տառապանք ու տանջանքից յետոյ, ջնաւաջովս տեսայ մեր անկախութիւնը, մեր երազածը, որի համար այնքան տանջեցինք: Այժմ հանգիստ սրտով կարող եմ մեռնել»:

Եւ իսկապէս, հէնց այդ երջանկութեան մէջ էլ մեռաւ. քոլերայի համաճարակը վերջ տւեց նրա անհանգիստ ու գաղափարական կեանքին: 1918 թ.ին: Նա թաղւած է Երեւանի նոր գերեզմանատնում:

ՍԱՐԵԱՆ

**ՍԵՆՆ ՍԱՀԱԿ**

(ՍԱՀԱԿ ՍԱՐՈՒՆԱՆԵԱՆ)

Սահակը բնիկ սալմաստեցի էր, ծնւած Ղալասար գիւղում, 1888 թ.ին, գեղջուկ համեստ ընտանիքում: Նա իր մանկութեան շրջաններում աղբի ու շնչել է Սալմաստում, հայ ազգային-յեղափոխական գարթօնքի միջուկը:

Իր նախնական կրթութիւնը ստացել էր հայրենի՝ Ղալասար գիւղի ծխական երկիւստ դպրոցում: Եւ արդէն աշակերտ ժամանակից աչքի ընկել ճարտիկութեամբ ու ինչպիսի դատողութեամբ:

Ծխական դպրոցը վերջացնելով՝ Սահակը արդէն մի պարաւստի ուժ էր տեղական յեղափոխական գործի ճամբար և բուն թափով նետում է գործի սապարէզ՝ միշտ պատրաստ իր անձը և անձնական բոլոր վայելքները զոհարեւելու սիրած Ժողովրդին: Միշտ ուրախ, միշտ դւարթ ու մեծ յոյսերով էր տողորւած: Երկար

ժամանակ վարեց տեղական մարտական խմբի խմբապետութեան պաշտօնը և եղաւ ենթախմբախէի անդամ: Եւ որպէս այդպիսին, յաճախ զիւրջ գիւղ էր անցնում, առում ու խօսում էր յեղափոխութեան ու ազգային գործերի մասին, համոզում, գրաւում և ոգևորում է տեղի երիտասարդութիւնը: Գիշերներն անդռ ճանգիստ չունէր: Մի գիշերայ մէջ նրան կարելի էր մի քանի զիւղերում տեսնել՝ միշտ ընկերական շրջաններում մեծ ոգևորութեան մէջ. այդ պատճառով էլ տեղացիներից և ընկերներից ստացել է «Գիշերայ Սահակ» մականունը կամ «Սեւ Սահակ»՝ իր մորթու սեւութեան պատճառով:

Սահակը մասնակցել է 1908 թ.ի Պարսկաստանի յեղափոխական շարժումներին՝ աչքի ընկնելով իր կրակոտ ու խնդուղն ոգով: Ապա միշտ մասնակցել է Սալմաստում կրիւնքերին քրդերի դէմ, որոնք յաճախակի յարձակում էին հայ և թուրք զիւղերի վրա կողոպտելու նպատակով: Մամուաւնդ 1914 թ.ից յետոյ, երբ քրդական յարձակումները մեծ ծաւալ ստացան,

այլ ևս դէնքը Սահակի ձեռքից վայր չընկաւ, մինչև 1918 թւականի Սարմատ-Ուրմի ինքնապաշտպանութեան կռիւները, ուր Սահակին երևան եկաւ իր ամբողջ մարտական կարողութեամբ:

Սամասը երկար դիմանալ չկարողացաւ տաճկական զերազանց ուժին և ընկճեց: տեղացի ու գաղթական զբաղակցողները բռնեցին Ուրմիից Համալիան տանող ճիւղ ու երկար ճամբան, անդոյս ու շրտուած: Սա-



հակն իր ընտանիքը թողած ծերունի հօր խնամքին, ժողովրդական ինքնապաշտպան կամաւորների հետ, հրացանը զրկած մերթ այս, մերթ այն կէտում ճակատում էր թշնամու դէմ: Ամբողջ մի տարի տեւեց այդ գաղթականական շարքաչ ու տառապալից կեանքը, մինչև որ 1919 թւին ցրելով Պարսկաստանի գանաղան վայրերը՝ ժամանակաւոր հանգրան գտան: Այդ թւին էր, որ Սահակը մի խումբ Սարմատեցի և Ուրմեցի գաղթականների հետ փոխադրեց Քաւրից, ուր սկսեց զբաղուել արհեստով, և միաժամանակ աշխատակցում էր «Մինարէթ» թերթին «Իր պրոցական զորքը Սարմատում» վերատառութեամբ մի շարք շահեկան յօդւածներով: Բայց նկատելով թերթի հակամոլորդական ընթացքը՝ անմիջապէս գաղաւթեցրեց աշխատակցութիւնը:

1921 թւին, երբ պարսիկ կառավարութիւնը Ատորպատականի հայերից կամաւորներ պահանջեց Սարմատան ու Սոմալին Սմկոյից զբաւելու համար, Սահակը որպէս տանապետ այդ կամաւորների շարքերումն էր: Իսկ ճիշտ երկու տարի յետոյ, երբ պարսից կառավարութիւնը գրաւել էր Սարմատն ու Սոմալին, մի խումբ սամատեցիների հետ վերադարձաւ մոխրների կոյտի վերածուած հայրենի գիւղը: Սակայն, կեանքը նրան այնտեղ չտպուեց և 1928թ. սեպտ. 3ին անկողին ընկաւ և նոյն ամսի 17ին վախճանուեց: Նրա մահը մեծ ցաւ պատճառեց շրջանի բոլոր ընկերներին ու հասարակութեանը:

ՍԱՐՄԱՆ

**ՎԵՀԱՆ ՍԱՐՈՒՒՆԵԱՆ**

Դաժան մահ եղաւ ընկ. Վահան Սարուխանեանի մահը, մայիս 7ին, Սարմատում, երկրաշարժի հետեւանքով, որի պատճառած զոհերի թիւը՝ միայն հայերից՝ հասաւ 87 հոգու:

Վահանը ծնել էր Սարմատի Դալասար գիւղում, 1905թ. հոկտ. 2ին, զիւլպական մի համեստ ընտանիքում: Մանկութիւնն անցկացրել է հայրենի գիւղում:

Իր ընտանիքի և մերձուոր ազգականների շրջանում նրա մերձուոր ազգականներից էին Սահակ Սարուխանեանը (Սեւ Սահակ) և Սարգիս Սարուխանեանը՝ Պանաստրի արշաւանքին ու հետագայ կռիւներին մասնակցած մի մարտիկ: Սրանց շնորհով էր մեծացել Վահանը:

Եթե տարեկան հասակում Վահանը մտնում է հայրենի գիւղի՝ ծխական դպրոցը, ուր այն ժամանակ սկսուեց և միաժամանակ զաստուու էր մեր հին յեղափոխական գործիչ ընկ. Ս. Քաղէոսեանը: Ի պրոցական շրջանը նրա համար դառնում է ազգային-յեղափոխական ոգու վառարան և լրացնում է ընտանիքի պակաս թողածը: Սակայն, հազիւ մի-երկու տարի սովորած՝ վրա են հասնում համաշխարհային պատերազմը և զրա հետևանքով Սամաստի իրար յայրորդ գաղթերը: Գաղթականութեան հետ մի որոշ ժամանակ անց է կացնում Համալիանում և Դաղարիում, դժուարին պարմանների մէջ, և վերջապէս ընտանիքով փոխադրում է Քաւրից, ուր նախ սովորում է նոր քայլած յատուկ գաղթականական դպրոցում, ապա Լիլաւայի Հայկազեան-Քամարեան երկսեռ տարրական դպրոցում, որի հնդամեայ ուսման դասընթացքի աւարտելով՝ մտնում է Ատրպատականի Հայոց Թեմական Կենտրոնական դպրոցը և 1927թ. աւարտում յաջողապէս:

Քաւրիցում Վահանի բնագործութիւնը հեռոցհեռ է աւելի է ձեւաւորում ու կայմակերպում. նրա մէջ երևան է գալիս հասարակական շիջը, և հասարակութեան ու մասնաւորապէս իր ծննդավայրին ծառայելու առաջին արտայայտութիւնը, դեռ իր աշակերտ ժամանակ, լինում է Սամաստի Աշակերտական Հայրենակցական Միութիւնը, որի հիմնդիրներից էր նա և որոշ ժամանակ նաև նախագահը:



Ի պրոցն աւարտելուց անմիջապէս յետոյ Վահանը ուսուցիչ է դառնում Սարմատում և պայտծառապարտ Մահալայի ազգային դպրոցում՝ հազիւ երեք տարի, երբ դո՛ւ է գնում երկրաշարժի աւերին:

Կրթական գործի հետ մէկտեղ նա ներկում է և կուսակցական աշխատանքների, ընտրում է Սարմատի Հ. Յ. Դ. Կոմիտէի անդամ և վարում պրոպագանդիստի պաշտօն: Իր պատճառները ներկում է նաև գրականութեան, անընդհատ դործեր անելով մերթ այս մերթ այն ընագաւաւում, ջանալով պտնել իրեն համար որոշ ուղի: Գրում է պատմա-քննիչ, դրամաներ, կատակերգութիւններ: Միաժամանակ հասցում է Սամաստի ժողովրդական երգերը, որոնցից մի քանի նմոյշներ տպագրեցին «Մասիս» օրացոյցում: Սկսել էր նաև թղթակցել «Յաւառջին», «Յուսարթեր»-ին Սարեան ծածկանունով՝ նպատակ ունենալով իր թղթակցութիւնների

մէջ հետզհետէ պատկերացնել Սարմատի ազգային-հասարակական կենտրոնը իր բոլոր կողմերով: Սկսել էր նաև տալ Սարմատում աշխատած և մեծ մասամբ տեղացի դործիչների կենսագրականները, ինչպէս Սև Սա-հակի և Տէր Վարդանի կենսագրականները, որոնք կը ապւեն Վերջապահում:

Այդ աշխատանքների հետ զուգընթաց փորձեր էր անում Սարմատում կայմոսիբակի թատրոնական, ինչ-պէս նաև զբաղարևական գործը:

Այդքան խոստովանալի և եռանդով լեցուն երիտասարդ էր Վահան Սարուխանեանը, որ յարգւած ու սիրւած էր Սարմատի ժողովրդական բոլոր խաւերի կողմից և որի եղբրական մահը խոր վիշտ պատճառեց ամենքին:

Մ. ԶԱՐԵԱՆ

### ՄԵԼԷԻ ԽԱՆԶԱԳԻՆ

Մելքին ծնած է 1888թ. Մաղնիսյի մէջ, Զմիւռնիոյ շրջանը: Փոքր տարիքէն կորսնցուցած ծնողքը՝ մեծցած է մեծ եղբոր՝ Յովհաննէս Սանդատեանի ինս-մակալութեան տակ: Առած է տեղույն նախակրթա-րանը, սակայն, ուսումը շարտուած՝ դերձակութեան տաւած են դինքը: Մինչև 1904թ. զբաղած է այդ ար-հեստով:

Մաղնիսոս յաւազոյն հայ դպրճալայրերէն մէկն էր: Անոր հայ քնակութիւնը զգացումով և բնորոշու-նեով միշտ եղած է հայրենասէր և 1895թ. սկսած արդէն ունեցած է Հ. Յ. Դանապետութեան կազմակեր-



պութիւնը, որ լայն համակրանք կը վայելէր, մանա-ւանդ, երիտասարդութեան մէջ: Ազատութեան սրբա-յան դադարաբար Մելքին ալ, 17 տարեկան հասակէն, նեոտը Դանապետութեան գերիւր: Մաղնիսոս նեղ եկաւ իր անհանգիստ և ապաստանէլ սրտին. 1904թ. ան ձգեց ծննդավայրը և անցաւ Զմիւռնիա իբրև յեղափոխական ուխտաւոր:

Մելքիի Զմիւռնիա գալը զուգադիպեցաւ Հ.Յ. Դ. ցուցական ձեռնարկներու նախապատրաստութեան: Փորձ ընկերներէ կազմուած էր մարմին մը, որ ուժա-նակով օդը պիտի հանէր կարգ մը հիմնարկութիւններ, որոնց մէջ և Օսմանեան դրամատունը: Վերջինիս տակը պնտուղ խանութիւնի մէկը վարձած էր իբրև դերձա-կատուն և յանձնուած մակարացի դերձակ Տիրան Զայր-մայրենիին (23—24 տարեկան). պատանի Մելքի Ռան-գատեանն ալ արեւցաւ անոր աշխերտ: Այս ձեռով կա-տարեցաւ Մելքիի մուշուր յեղափոխական գործի առ-պարհը:

Մելքիի ուրախութեան ու ողևորութեան չափ ու սահման չկար. ան հասած էր նպատակին: Գիշերը ցու-րեկին խառնած անդուլ կաշիստէր. ցերեկները կը հե-

տուէր դերձակութեան, դիշերները կը մասնակցէր, յեղափոխական գործունէութեան — ուժանակ ու ուսմբ կը փոխադրէր, զարտի յանձնարարականներ կը կա-տարէր: Անձամբ կը սպասէր Կարմիր Հարսնիքին: Բայց, դժբախտաբար, դէպքերը այլ կերպ դասաւոր-ւեցան. 1905թ. յուլիսին ամենուրեք սկսան ձերբակա-լութիւններ ու հալածանքներ: Ձերբակալեցաւ և Մել-քին, երկարատև ու դաժան հարցաքննութեան ենթարկ-կեցաւ, բայց դիմացաւ ոստիկանական հրէշութիւննե-րուն ու՝ ունէ դաղտնիք չյայտնեց: Եւ 11 ամիս բան-տարկեւէ յետոյ, 1906թ. յունիս 6ին, յետ դատաւար-ութեան, երեք տարւայ բերդարգելութեան մէջու ստացաւ և տասնեակ մը ընկերներու հետ ուղարկեցաւ Պոտուրում բերդը:

Երկու ու կէս տարի յետոյ, Օսմանեան Մահման-դրութեան հռչակումով, ընդհանուր ներումով Մելքին ալ ազատ արձակեցաւ և վերադարձաւ հայրենի Մաղ-նիսա, ուր ամուսնացաւ և հաստատեցաւ ընթերցա-տանաց շեղերու իր յեղափոխական գաղափարէն ու նկարագրէն: 1915ի եղեռնը անոր ալ հասաւ. ձերբա-կալեցաւ ու տարագրեցաւ դէպի անապատները և մե-տաւ 1918թ., զինադաշարի նախօրեակին, Առանայի մէջ՝ իր ետևը թողով սգաւոր այրին և հինգ տարեկան աղջնակ մը: Իր վերջին նամակը եղաւ տողերիս գրողին, Առանայի հիւանդանոցին. «Միջրի ընկեր Վարպետ, ահա թեղ կուղարկեմ նիգարս տասնպանիք աշխարհէն... Պահնեցէք, դուցէ որ մը պէտք ունենաք... Աւաղ, պէտք ունեցա՛ր՝ իր այս համատու կենսագրականին կցելու համար...»

ՎԱՐՊԵՏ

### ՀՐԵՇՏԱԿԵՆՑ ԽՈՐԷՆՐ

Մաղնիսացի էր Պորէնը, ծնած 1873թ.: Ուսումը ստացաւ տեղույն ազգային վարժարանին մէջ: Գոսն տարեկան պատանի էր տակաւին, վառվռուն ու խն-դավառ, երբ Երկրի ներսերէն յեղափոխական շարժու-թիւնը և կոտորածներու յուրեր հասան: Անոնց սպաւո-րութեան տակ Պորէնը ձգեց ծննդավայրն ու համբայ ինկաւ դէպի Կովկաս, ուր մտաւ Հ.Յ. Դանապետութեան շարքերը Ազգեով ժամկետունով: Կովկաս եղած ժամա-նակ աչքի ինկաւ յանդուզն ու քաջ բնատրութեամբ ու եռանդուն գործունէութեամբ:

1901ի վերջեր կորուչի ահաբեկել իգմիրի յայտնի երկաթի վաճառական Մ. Պալիզը, որ կուր գործիք դարձած կուսակալ Գեամիլ փաշայի ձեռքին՝ մատնու-թիւններ կրէր և պատճառ դարձաւ իր բազմաթիւ աքաղորդներու ու բանտարկութիւններու: Այդ նպատակով Կովկասէն կը կանչէր Պորէնը, որ տեղ հասնելուն պէս կանցնի գործի: Առուստ մը կը ներկայանայ Պալիզոյն իր իսկ վաճառատան մէջ և գլխին ատրճանակի հար-ւածով մը գետնի կը փռէ հրէշը անկեղան պիճակին մէջ: Ու երբ դուրս կելլէր, յարձակուն կենթարկել Պալիզոյի բեռնակիրներու կողմէ, որոնցմէ մէկի նետած աթուռն կը զարնի ու վայր կիծայ: Միւս բեռնակիր-ները վրա կը հասնին ու կը սկսին խոչնդանել անպաշտ-պան հայրուկը: Վերջապէս, կերևան և «ուշաքաճ» ոստիկանները, որոնք Պորէնը արիւնջալ պիճակին մէջ կը փոխադրէն հիւանդանոց: Երեք ամիս յետոյ, հայրե-րուժած, կը հանել դատարան, ուր խորտակ կեցած-քով կը խոստովանի իր արածը և կը դատապարտի մահուան պատժի:

Չորս տարի Պորէնը մնաց բանտին մէջ մահուան սև մղձաւանջը դիմին: Եւ 1905թ. ժաննթ դէպքերու առ-թիւ, Սուլթանի հրամանով, կախարան հանեցան Արի-փաշա ըլլած հրապարակին վրա, ու մարմինը յանձնե-ցաւ առաջնորդարանին: Պորէնի ողբերգական նահա-տակութիւնը մեծ ցեղեղանքիւն գործեց հայ ժողովրդի վրա, որ պաշտամունքով կարտասանէր անոր անունը:

ՎԱՐՊԵՏ

ՀԱՄԱՊԱՆՑԻ ԶՈՂՆԵՐ

ՍԱՂԱԹԵԼ ԶՈՂՐԱԲԵԱՆ

Սաղաթելի Զահարեանը ծնել է Համազանում, 1878թ. : Ուսանել է Համազանի Ամերիկեան դպրոցում, ապա անցել է Թեհրան կատարելագործելու իր ուսումը. աւարտել է այնտեղի Ամերիկեան դպրոցը, պաշտով մտել է անգլիական բանկը: Սաղաթելը Հարուստ ընտանիքի զաւակ էր: Վաղվուսն ու եռանդոտ՝ նա պատանեկան վաղ Հասակից զբաւեց Հայ յեղափոխական շարժումներով և 1895 թւականներին մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը՝ իրեն ամբողջապէս տրամադրելով կուսակցութեան: Եւ 1896ին, երբ կամաւորական արշաւախումբ էր կազմում Ռանատրի արշաւանքի համար, Սաղաթելը էլ միացաւ կամաւորներին, անցաւ սահմանը՝ մասնակցեց կրիւներին ու ծանր վիրաւորեց՝ Կարօի օգնութեամբ ազատեց թշնամուց, բայց՝ երկրորդ անգամ զարնեց թշնամու անգութ գնդակով և դո՛ւ ցնաց իր ընկերոջ հետ միասին: Դիակը մնաց կու՛ր դաշտում անթաղ:

ՅԱԿՈՒ ՍԱՀԱԿԵԱՆ

Յակոբ Տ. Սահակեանը ծնել է Համազան քաղաքում 1883 թւին: Եօթը տարեկան հասակում կորցնում է չորր և այրում մօր և պապի խնամակալութեան ներքոյ: Ուսանել է Ամերիկեան դպրոցում, որի ընթացքը չաւարտած՝ թողնում է և զբաղւում մանր վաճառականութեամբ, ապա մտնում է ծառայութեան: 1909ին, երբ Համազանում հրիք էր դրւում Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութեան, Յակոբը ճնշեց



առաջին օրւանցի մտնում է նրա շարքերը և աշխոյժով ու եռանդով ներկում յեղափոխական դործին: Իր միակ տենչն էր անցնել Երկիր և դո՛ւնել Հայրենիքի համար: 1909ին, պարսից յեղափոխութեան օրերին, երբ Դաշնակցութիւնը իր կամաւորներով մասնակցեց շարժումներին, Յակոբը մտնում է կամաւորական խմբի մէջ, դործում է պարսիկ դեմոկրատ կամաւորների հետ կողք-կողքի և աչքի ընկնում իր անվախ քաջութեամբ ու մեծարտութեամբ: Կամաւորական խմբի մէջ մնում է մինչև կամաւորների ջրումը: Ապա լաւ պաշտօնով մտնում է կառավարութեան ծառայութեան մէջ: 1913 թւին հիւանդանում է տիֆով և 15 օր մաքառելով դատան հիւանդութեան դէմ մահանում է մայիս ամսին,

Համարձման տօնի օրը: Յակոբը մեծ յարգանք էր վայելում, մասնաւոր, պարսիկների շրջանում, թէ իր սիրելի քնաւորութեան և թէ անձնագո՛հ գործունէութեան համար:

ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Վահան Ս. Պաշտօրեանը ծնել է Համազան քաղաքում 1892 թւին. աւարտել է Ամերիկեան դպրոցի լրիւ դասընթացը, որից յետոյ ծառայութեան է մտել Համազանի անգլիական բանկում: 1912 թւին, երիտասարդներից կազմում է մի խումբ «Կաթիլ» անունով, որի նպատակն էր զարկ տալ ինքնադարպացման և բանալ ընթերցարան: Հետագային այդ միութիւնը իր ամբողջ կազմով մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը. Վահանն էլ մէջն էր: Այդ օրւանցի նա դառնում է հաւատաւոր ու դործօն զաշնակցական: Սակայն, նրան չլիճակեց մեծ դեր կատարել, մի դժբախտ արկածի հետեանով, Փոտարլ խաղի մէջ, ինչ որ հարւածից վնասուելով՝ նա երկար հիւանդացաւ ու մեռաւ, 1918ին:

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՂԱԶԱՐԵԱՆ

Ստեփանոս Ղազարեանը ծնել է Համազանում 1889 թւին, ուսել է Ամերիկեան դպրոցում, մինչև չորրորդ բաժանմունք. ապա մտել է արհեստանոց արհեստ սո-



վորելու համար: Տեղական արհեստով չբաւականանալով՝ անցնում է մայրաքաղաք կատարելագործելու իր արհեստը, ուր և մտնում է ծառայութեան մէջ: Պարսից յեղափոխութեան օրերին Ստեփանոսը ընդունւում է Դաշնակցութեան շարքերը, որպէս կամաւոր մտնում Եփրատի խմբերի մէջ և մասնակցում կրիւներին: Անվախ ու քաջ երիտասարդ էր՝ պատրաստ իր անձը հո՛ւհարելու Հայրենիքի աղաւտութեան համար: Եւ Հայրենիքի անկախութեան լուրը ստանալով՝ շտապեց այնտեղ՝ Երեւան, ուր մտաւ զօրքի մէջ և հաւատարիմ ծառայեց իր Հայրենիքին: Երեւանում անհետացաւ բոլշևիկների կրիւների մէջ, կամ նրանց գրաւելուց յետոյ: Ի՞նչ էղաւ, սպանւեց կոււում, թէ դո՛ւ դնաց բոլշևիկեան դատան կացնին — յայտնի չէ:

ՍԱՄՈՒԷԼ ՍԱՀԱԿԵԱՆ

### ԽԱՆՆԱՍՈՐՑԻ ՄԵՍՐՈՂ

Հ. Յ. Դաշնակցութեան Ատրպատականի կազմակերպութեան մէջ յիշատակութեան արժանի և պատուաւոր տեղ մը կը գրաւէ Ռանատորցի Մեսրոպը՝ Մեսրոպ Տէր-Յակոբեանը։ Մնած է Քաւրիի Ալլամիւլը զիւրին մէջ 1876ին։ Այս զիւրին մէջ յայտնի էր Տէր Յակոբեանի գործատանը, որուն շատախոնքներէն մէկուն՝ Տէր-Յակոբ քահանայի որդին էր Մեսրոպը։ Նախնական ուսումը զիւրական զարգացնելու ստանալէ յետոյ կուզարկէ Քաւրի, ուր երկու տարի ալ Լիւսաւայի Հայոց Աղլային դպրոցին մէջ ուսում կը ստանայ։

Ուսման սէրն ու ծարաւը աջքան ուժեղ էին Մեսրոպի մէջ, որ երեք օր կամովին ուզած կը մնայ պահանջելով ծնողներէն, որ իրեն սովորեն էլմիածնի ձեւաբանը՝ միջնակարգ կրթութիւն ստանալու համար։ Մտղները կը կատարեն իրենց գաւազի խնդրանքը։ Մեսրոպը 1890թ. սեպտեմբերին Քաւրիէն կանցնի էլմիածին, ուր է յայտ կուգայ իր ընդհանուր կրթութեան և աշխատասիրութեամբ՝ վայելելով ուսուցիչներու և ընկերներու համակրանքը։ Կը ստանայ միջնակարգ կրթութեան դասարանական բաժնի վկայականը, աչքի գարնելով «զերբազանց վարուք» և «յոթ գովելիք» յառաջդիմութեամբ։ Էլմիածնէն կը վերադառնայ Քաւրի, ապա կանցնի Դազլին իր Եղիա եւրօք մօտ, անկից կը ստանայ 500 Քուման դրամ ու կը գտնույ Քաւրից։ Առանց ո՛ւն մէկին բան մ'ըսելու կը գնէ մի մը, հրացան, փամփուշտներ և դադոտի հեռանկով Քաւրիէն՝ կուղղուի դէպի Սալմաստ, ուր 1893ի վերջերք կը մտնէ։

Հ. Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ, դառնալով անոր անձնէր և ուխտեալ անդամներէն մէկը։ Սալմաստի մէջ կը լծուի կուսակցական բազմատեսակ աշխատանքներու և ամէն տեղ կը վայելէ յարգանք և համակրանք։ Իր պարզ ու համեստ ընտրութիւնը, մտաշէիք և ընկերասէր վերաբերմունքը խոր պապարտութիւն ձգած են զինքը մօտիկէն ճանչցողներուն սրտին և յիշողութեան մէջ։

Հ. Յ. Դաշնակցութիւնը 1897ի ամբան կը կազմակերպէր Ռանատորի պատմական արշաւանքը, որուն աշխատանքներուն լծեցաւ նաև Մեսրոպը՝ Սալմաստի մէջ։

Երբ հայդուկային խումբերը Սալմաստէն ճամբայ ելան դէպի Ռանատոր, Մեսրոպն ալ իր պարզ հայդուկ մտած էր Շատախից Փոխիկի հարիւրեակին մէջ։ Յուլիսի 25ի արշաւայտին՝

Կարկուտ տեղաց իսմատարայ դաշտումը,  
Փիղայիմբ դաշնակցական վրէժմաւ եսվումը...

Կատաղի կռիւներն ընթացքին Մեսրոպն ալ քանի մը տեղով վերատորեան։ Արշաւանքէն յետոյ, երբ հայդուկային խումբերը ցրիւ կեան, Մեսրոպը վերա-

դարձաւ Քաւրի և 2 տարի Լիւսաւայի դպրոցին մէջ ուսուցչական պաշտօն վարեց։ Այդ մտաւ առեւտրական ապարհը։ 1903ին ամուսնացաւ և դարձաւ հարկ շորս դաւակնեբու։ Քաւրիի մէջ է յայտ եկաւ իր կուսակցական և հասարակական գործունէութեամբ, որ լի է դեռահասութեան արժանի բազմաթիւ փաստերով։

Պարսկական յեղափոխական շարժումներու ժամանակ (1909—1912) նա վարեց բազմատեսակ պատասխանատու գործեր։ Ընտրւած է անդամ Ատրպատականի Հայոց Թեմական Խորհուրդի և Կենտրոնական դպրոցի հոգաբարձութեան։ Իբրև շրտակ մարդ և ուխտեալ դաշնակցական կը վայելէր լայն ժողովրդականութիւն։ Ատրպատականի մէջ։ Այժմ դեռ ողջ է անոր մայրը՝ 90 տարեկան տիրուհի Լազարու։

Մեսրոպ Տէր-Յակոբեանը մեռաւ 1915ի նոյեմբերի 15ին Քաւրիի մէջ, հաղի 40 տարեկան։ Գերեզմանը կը գտնուի Աղլային Հանգստարանում։

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ

### ԺԻՐԱՅԻՐ—ՀԱՃԻ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ՝

«Իրօպակ»-ի այս տարւան յունարի թիւին մէջ կար ժիրայր—Հաճի Կարաբանի կենսագրականը։ Այդ յօդուածի մէջ յիշուած է, որ ժիրայրը կարճ ժամանակով Եգիպտոս գտնուած է 1895ի միջոցները, բայց չէ յիշուած, որ երկուքը անգամ ալ ալարէ է Եգիպտոս, Դաճարէ, 1903-4 թուականներուն։ Այստեղ նա ծանօթ դարձաւ ցնցող դէպքով մը։

Դժբախտարար, այդ դէպքի մասին յիշողներ չեն կան. մանրամասնութիւնները իմ յիշողութիւնէն ալ վրիպած են։

Ժիրայրը իբրև պահապան կը ծառայէր Հայի էջեղիւնի Մաթարիայի պարտէզը, ուր ջալամարուծութիւն կընէին։ Օր մը արքա ծառաներէն մէկուն հետ խնդիր ունեցած ըլլալով՝ ժիրայրը մահաւան սպանալիք կընէ և իրապէս նոյն երեկոյին զնպակով մը կը տապալէ մարդը։ Հետևանքը եղաւ. ձերբակալութիւն ու բանտարկութիւն։ Հայի էջեղիւնի փաստաբան վարձքն, շատ աշխատեցաւ և ի վերջոյ յաջողեցաւ վճիռէն առաջ շնչին գումարի մը (կարծեմ՝ 10 օսկի) երտխաւարութեամբ ժամանակաւորապէս ազատել ըստնէն։ Էջեղիւնի ժիրայրի դուրս ելլալէն շարժեմ մը առաջ Եւրոպա մեկնած էր, բայց կարգադրած էր իր գրասենեակին, որ ժիրայրի ձեռքը գումար մը տան և իսկոյն հեռացնեն Եգիպտոսէն։ Այդպէս ալ եղաւ, ու մենք չհետաքրքրեցանք ալ թէ ինչ վճիռ աւելին։

Ահա այս դէպքն է որ կուզէի մէջոցի կանել։ Թեբու գտնուին մարդիկ, որոնք ծանօթ են աւելի մանրամասնութիւններու, լաւ կը լինէր վերականգնելն ամբողջ դէպքը։

Ս. ՆԱՍՏԵԱՆ

## ԼՈՒՐԻՐ ԵՐԿՐԻՑ

Օգոստոսի վերջերը Խորհրդ. Միութիւնից դուրս եկած ծանօթ և արժանահաւատ մի անձնատուութիւն հետեւեալ տեղեկութիւններն է հարգողում անտեղ տիրող վիճակի մասին։ Հեղինակը պտտել է շատ տեղեր և իր աչքով տեսել դրութիւնը։

— Ենթին Ռուսաստանում, բայց, մանաւանդ, Ուկրայինայում կատարելով սով է արդէն։ Շատ շրջաններում բերքը իրատ փառ է և բերքահաւաքի պարտականութիւնները կատարելուց յետոյ զիւրացութիւնը մնացել է առանց հայրի։ Ինքզինակաւոր առաջնայ պարենատուրքի պէս բան է- կառավարութեան որոշած քանակով զիւրացին պարտաւոր է պետութեան յանձնել

իր բերքը չափազանց ցած գներով։ Յաճախ լինում են դէպքեր, երբ ամբողջ բերքը արւում է բերքահաւաքին և ժողովրդի ձեռքին ոչինչ չի մնում։

Ռուսաստանի սովը անդրապատնուծ է և Հայաստանի վրա։ Եսի՛ որոշ միջոցներ Ռուսաստանից չեն ստացւում։ Այգա՛ մեծ քանակութեամբ առաւ գաղթականներ թափում են Հայաստան և մորեիի պէս ճարակում են ուսույիչները։ Բնականաբար, միջերկրի գները արագ բարձրանում են։ Երկու ամիս առաջ հայի փութը արժէր 30 ռուբլի, երեք շաբաթ առաջ արդէն բարձրացել էր 150 ռուբլու։ Նոյն համեմատութեամբ աճում են և միւս միջերկրի գները։

Հայաստանի գլխին էլ կախած է սովի ուրակա-  
նը: Հայարարները շատ վայրերում այրել են արևից,  
երաշտը մեծ վնասներ է հասցրել: Արևելքում բերքը  
չի ստացելու: Կողմոգները փչանում են. զիւղացիու-  
թիւնը կամ Հեռանում է կոլիոպներէջ, կամ եթէ րոնու-  
թեամբ մնում է, ամէն կերպ ներսոյն է քայքայում: Մանաւանդ, շատ է վնասել թամբակը, որ խեղճում է  
մոլախոտերի մէջ. զիւղացիք խուսափում են քաղհան  
անելուց: Քաղհանի համար զգաւ են դուրս բերում  
բժիշկներին, ուսուցիչներին, ուսանողներին...

Իշխանութիւնը ոչ մի հեղինակութիւն չունի ժո-  
ղովրդի աչքին: Հայկումկուսի քարտուղար Արասի Սան-  
ջևանը բացարձակապէս կորցրել է իր ազդեցութիւնը:  
Պաշտօնի վրա մնում է միայն Ստալինի հետ ունեցած  
անձնական բարեկամութեան շնորհիւ: Այդ բարեկամու-  
թիւնը նրան թէ է տալիս ամէն տեսակ յիմարութիւններ  
անելու:

Վերջերս, Հայաստանի լեռներում նորից երևացել  
էն բմբուս խմբեր, որոնք կուտն են իշխանութեան և  
Կոմունիստական Կուսակցութեան գործակալների դէմ:  
Նորից սկսել են զիւղացիների ձերբակալութիւններ և  
աքսորներ:

Աքսորականների վերաբերմամբ էլ նոր քաղաքակա-  
նութիւն է սկսել. կատարում են տեղափոխութիւն-  
ներ, համախմբում են որոշ վայրերում, ուժեղացնում  
են հակողութիւնը: Գլխաւոր պատճառը համարում են  
վերջերս ծայր տաւած զանաւածային փախուստները դէ-  
պի Մոնղոլիա, Մանջուրիա և Պարսկաստան, թէև ան-  
հաւանական չէ, որ սա մէկ մասն է այն ընդհանուր  
գորահաւաքի ու պատերազմի պատրաստութեան, որ  
այս րոպէին տնայապիս արագութեամբ տարւում է  
երկրում: Պորհրդային իշխանութիւնը կատարելապէս  
համոզւած է, որ ծայրինան յարձակելու է իր վրա,  
թերևս, շատ շուտով և անակախորէն: Ընդհանրապէս  
այժմ քաղաքական աքսորականներին կապում են գործի

հետ, որպէսզի հակողութիւնը լինի ակելի խիտ և ան-  
ընչատ: Հաստատութիւնը պատասխանատու է Գէպե-  
ուի առաջ նրանց նոյն իսկ մէկ ժամուայ բացակայու-  
թեան համար:

Մասնաւոր կասկածի և հալածանքի առարկայ է  
Հ. Յ. Դաշնակցութիւնը: Պոսքեր են լուում, որ Գե-  
պեուն մտադրի է կաղմակերպել զանազան կան դատա-  
վարութիւն մեծէն իկեների դատաւարութեան օրինակով:

Արտասահմանից բերւած զաղթականութիւնը բա-  
ժանել են զիւղերի վրա...

Թուրք զիւղերը զանգամօրէն թողնում են իրենց  
տունն ու տեղը և փախչում են թիւրքերի: Նրանցից  
շատերը զնվականաբուել են Արաքսի ափերին: Նրանք  
զաղթում են օրը ցերեկով և յայտարարում են, որ  
զնվականաբուութիւնները չեն կարող կանդնեցնել իրենց  
փախուստը: Ել կարող էք երևակայել թէ ուր է հասել  
զուրթիւնը:

Կաթողիկոսական ընտրութիւնները, ըստ երեւոյ-  
թիւն, պիտի տեղի ունենան: Կաթողիկոսական թեկնա-  
ծութիւնների շուրջ կան շատ խօսակցութիւններ: Մի  
ժամանակ տալ էր քաշում Գէորդ եպ. Չէորէջեանի  
թեկնածութիւնը: Խօսում էր և Մեարոպ Մագիստրոսի  
մասին, բայց վերջերս մէջ տեղ է հանում Պորէն եպ.  
Մուրադբէգեանի թեկնածութիւնը: Տրւում է Կ Աթէշեքի  
Մաղլումեան եպ. -ի անունը:

Առհասարակ, կաթողիկոսական ընտրութեան շուրջ  
երկու բոլորովին հակառակ կարծիք կայ: յոռետեսները  
հաստատացնում են, որ եղածը խաղ է և վերջին պահուն  
ընտրութիւնները նորից կը յետաձգեն: Հաստատներն,  
ընդհակառակ, պնդում են, որ խորհրդային իշխա-  
նութիւնը Կր արտաքին քաղաքականութեան հաշիւնե-  
րով թոյլ կը տայ, որ ընտրութիւնը կատարուի ու նոյն  
իսկ կը թողնի, որ ընտրուի ոչ անպատճառ Ձեկայի  
գործակալը:

ԿԵԱՆՔԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Յուլիսի սկիզբէն ի վեր Արևելեան Նահանգներուն  
մէջ ընդհանրապէս, ու մասնաւորապէս քրտաբնակ վայ-  
րերում մէջ, տեղի կունենան զինուորական մեծ շարժում-  
ներ ու գործողութիւններ, որոնց նպատակն է, նախ  
օղակել քրտութիւնը և ապա գործադրել ջերմա ժողո-  
վարի տեղահանութիւնը, մի անգամ ընդմիջու վերջ  
տարու և պատմութեան յանձնելու համար քրտական  
հարցը: Մրաքի նպատակին յաղորդութիւնը, անկասկած  
է թիւրքացի համար. ան ունի փաստը՝ Հայկական տե-  
ղահանութիւնը և անոր հետեանքը: Ու թիւրքը գիտէ  
որ համահանրային այս կեղծ խաղաղութեան ճգնա-  
ժամին, անհնար է արտաքին ուժէ միջամտութիւն՝  
հանդէպ անմարդկային իր բոլոր արարքներուն: Քա-  
ղաքական պայմաններու ներկայ նպատատուր դասաւոր-  
ումներին օգուտեղով՝ թիւրքը ձեռնարկած է քրտական  
հարցի հաշիւ յարդարին:

Ձիւրորական գործողութիւնները կը վարէ Դրք զօ-  
րքանակի հրամանատար Քէհան Կան իրեն արկից  
ունենալով Ճրքբա քօմանտանը, Շէմսետաին պէյը:  
Տեղահանութեանց պատասխանատու վարին է Մար-  
տինի նախկին կուսակալներէն Նատի պէյը, արտակարգ  
լիազորութեամբ, գործակից ունենալով, մարզպանու-  
թեան ընդհանուր ապահովութեան փոխ-տնօրէն (մի-  
ֆիթթիլը ումիտիլը սաայլը միտիբ մուսլիմի) Շէվ-  
թէթ պէյը:

Ձիւրորական գործողութիւնները այս ընդհանուր  
նպատակն ունենալով հանդերձ, առանձնապէս կուղղուի  
նաև Տէրսիմի պաշարման:

Վերջերս Տէրսիմ անցաւ ու ապաստանեցաւ շէյխ  
Սախի եղբայրը՝ շէյխ Ակախիրբազմանը իր գինակից  
քրտներով, լքելով իր նախկին վայրերը, Կէնքն ու  
ձապաղճուրը:

Ուրֆայի, Մէվլէբէկի, Մարտինի ամբողջ զինուորա-  
կան ուժերը, ինչպէս նաև Փըրքը մեծ Տիգրանական  
ուժերէն յուլիսի 16էն ի վեր կը մեկնին Տէրսիմի ուղ-  
ղութեամբ:

Յուլիսի սկիզբը յատուկ հրամանագրով, զինուորա-  
կան ծառայութեանց պարտաւորւած են Տիգրանակերտի  
և կուսակալութեան պատկանող բոլոր ոչ-զինուորական  
բեռնատար ինքնաշարժերը ու թւազրւած են բոլոր  
գրաստները:

Ուրֆա, Մէվլէբէկ, Վերանշէրի քաղաքները պա-  
շարման օրակ անուան են 1 Փրքիա փիյատը, 1 պայ  
սիւվարի ճրգամիյէ և 5 ալայ սէյտար ուժերով: Ընդ-  
հանուր ապահովութեան փոխ-տնօրէն Շէվթէթ պէյը  
սկսած է ցուցակագրել այս շրջաններու քիւրտ սոցո-  
վուրդը: Ոստիկանութիւնը շրջապանց խտտութեամբ  
զինահասցում կը կատարէ: Ցարք ծեծի տակ մեռած  
են իրա քիւրտ մուխթարները: Յուլիս Դին քիւրտ ցե-  
ղապետ Մամօ Համտին և եղբայրը Համտինի ձերբա-  
կալւած ու զինուորական հակողութեան տակ տարւած են  
Բարանատապ: Իրենց ընտանիքները Վէրանշէրի մէջ  
հակողութեան տակ են անուան:

Մարտինէ կարճուանակ ապամանիւթ կը փոխադրուի  
Վէրանշէրի չեղորոնցած զինուորներուն:

Այս շարժումներէն մտահոգ Տիւրքաբէրի շրջանն

երեսունէն աւելի ցեղապետներ յայտնի չէին Ֆարսիի զլխաւորութեամբ, լքած են իրենց բնակավայրերն ու իրենց մարզերով բարձրագոյն ու սպաստանած են իրենային անտարիկ վայրեր: Աստուգ հաւաքական զինուոր են կառուցած «Հօյսուրնի կելզոնի» խնդրելով զինական օգնութիւն և օժանդակութիւն, յայտնելով որ վճարած են զիմպորդի թիւրքերուն:

Փայտասական է դարձած նաև յայտնի եմին Տէրի-խանը, որ այժմեան ի պատուի էր թիւրքերուն էր (Իլիթ-Փայլէն) յանձնուէն վերջ:

Հայաստան մասնաւոր սուրհանդակներու միջոցով հետևող շրջաբերականը դրկած է երկրի ցեղապետներուն և ժողովուրդին ուղղած:

**Սիրիի՝ հայրենակից,**

Հասած է այն մեծ վտանգը, որ ամբողջ Բիւրս աշխարհը աղէտի պիտի մատնէ: Թիւրքիան, որ վաղուց Բիւրսը բնացնելու ցանկութիւնը կը սնուցանէր, որիւն առնն իր նպատակը այսօր արագ ու որոշ կերպով երապարակ չէր դրած:

Ազգ. Մեծ ժողով անուրը կրող պնակալէզներու խմբակցութեան կողմէ դրած օրէնքը զուգ ար անկցած պէտք է ըլլաք. այսու հանդերձ անոր գլխաւոր կէտերը նոյնութեամբ կը ներկայացնենք՝ Պուխա երաստակաւ «Սիլիլէթ» քերթի 5 մայիս 1932 թ. Բալիկի և 2237 թ. օրինակէն առնելով. «Բիւրզական, քաղային, արհեստակցական և աշխատանքային խմբարարութեանը պիտի արգիլին, եթէ անդամներու մայրենի լեզուն քերթերէն չէ. նման անձերու կողմէ գիւղ մը, քաղ մը, արհեստակցական միութիւն մը և կամ գործի մը ճիւղը իրենց պատկանատներուն սեփականացնելու ձեռնարկը պիտի արգիլի: Նախարարաց խորհուրդի որոշումով ներքին գործոց նախարարը իրաւասու պիտի ըլլայ ցրելու նման հարմարութեանը՝ մէջը ըլլալով նաև ներկայիս գոյութիւն ունեցողները»:

Թրեւթեան չպատկանող և թիւրքերէնը իրենց մայրենի լեզուն չընդունողներու այս ցումը չի՝ նշանակեր արդեօք Գրուսթիւնը բնացնելու մեծով-պտիկով՝ զայն անցատելով իր հայրենի բնակավայրէն, որ այսրած է և կապով չորս հազար տարի թ Վեր, և զայն նետելով, անօրի ու քշուտ, այլարին Անտառուի կրօնով, նկարագրով և բարոյականով ազգականած մարդերուն մէջ: Ասկէ գտա՝ առաջի տեղափոխութեան ընթացքին Քեզ չսպաննելուն զգացող թիւրքերը արդեօք այս անգամ ինչ ալ խումբ-խումբ պիտի չսպաննեն՝, ինչպէս ըրին հայ կարամաններուն: Թիւրք գազանութեանն ամէն ինչ կը սպասի:

Սիրիի՝ ազգակից, զուս ալ Գրուսթեան մէկ թանկահին անդամն եւ. պատմութեան, յաւարիկայ տերունդներուն և կրօնիկն առաջ մեղք մեծ է: Մեր համը գիտու չխոսովիս փափաքով՝ ցարդ ներկայացող առիթներէն չկրցամք օգտուի և հիմա՛ կը տեսնենք թէ այս մասին ցարախօրէն խարած ենք: Վատ թիւրքը խելայեղօրէն կը հարած է և կը յայտարարէ թէ մէկ Բիւրս իսկ ոչ պիտի չքողու: Այս կացութեան հանդէպ էս գործը պիտի ըլլայ մէկի թողուլ ցեղակիցներու հետ ունեցած ներքին անհամաձայնութիւնները և զէմքի փարիլ: Թիւրքին արիւնտ գործունէութեան միայն այս կերպով կարելի է փախադարձել: Ներկայում Բիւրսիտանը միայն այս կերպով կարելի է ազատել բռնադատներու ձեռքէն:

Մտածեցէ՛ք անգամ մը ինչե՛ր տեսան առաջին աւարիկները. մեր ամենէն մեծ գերդաստանները, ինչե՛ր քաղցրիկ Անտառուի թիւրքին նախաորիճներուն տակ՝ անօրի ու քշուտ: Անիի պատահեր, անիի կրօնաւիրական չէ՛ արիւնով ու արցունքով պաշտպանել մեր հայրենիս և մայրիս և շիրիմներուն ու սակարները կրող

մեր ծնայները քան թէ իրև Բիւրս տտարանալ պարզ ժանտարմայի մը անարգանքներուն համակերպութեան մէջ: Չենք կարծեր որ այլևս մեր մէջ զինքի՛ չեն դարձրա՞նք ըսողներ գտնիւն, որովհետև օրէնքը պարզ է. Բիւրսիտանի մէջ անտա մը պիտի չքողու: Հետևաբար ոչ ոք դուրս կը մնայ այս օրէնքին սահմանէն: Նայի իսկ հասարակ մշակ մը պիտի չկրնայ Բիւրսիտանի մէջ մնալ:

Օ՛րն, եղբայր, ի գէ՛ն: Ապացուցանե՛մք, ամբողջ աշխարհին, թէ՛ մենք մեր դիցարգն ճակնիքին դիցարգն գաւակներն ենք: Ասով կարելի է հպատութեան և իր կրօնիկն տէր Բիւրսիկն պատուութիւնը, հայրենիքին փրկութիւնը: Մեղք չէ՛ որ Բիւրսիտանը թիւրք առօրէն տակ նգովի, երբ անոր իւրաքանչիւր անտար հարիւր թիւրքի դէմ է, ասիկա մենք մեր ամէն առնեւան փորձով հաստատած ենք:

Եթէ դիցարգնական մտեր աչք չառնեմք, վատահ ըլլանք որ թիւրք թուրքի մէջ պիտի խեղդէ մեզ. անօրութեան պիտի մեռնինք: Այս բոլորը աչքի առաջ ունենալով՝ առանց ժամանակ կերսնցնելու համաձայնութեան եկուր շուրջ գտնուող պետերուն և գերդաստաններուն հետ և ինքզինքդ ձեռք մի՛ տար: Երբ երկրին մէջ զէմքը պայթի, վատահ եղէ՛ք որ շարժումը ուժեղացնելու համար բոլորս, մէջը ըլլալով բազմաթիւ սպաններ և մտաւորակներ, այլաթ մեռուիք հայրենիքի և կրօնի այս կուլի մէջ: Մտած՛ որ միայն զէմքի փարելով կրնեմք հայրենիքը փրկել, մեր կրօնքը պաշտպանել և Գրուսթիւնը ստորնացումէ գերծ պատենի. և առանց վարանուի որոշումը տալով՝ մի՛ քաշիլ յառաջապահ ըլլալ, որովհետև եթէ՛ նայն իսկ գտնուելի մը չափ հեզ ըլլաք, Բիւրս ըլլալուց համար ընտանիքի բոլոր անդամներուն կէս մասնա զատապարտած ես թիւրքին աչք: Բարձրեայն Աստուած ալ կրնէ՛ զուրք աշխատեցէ՛ք յանուն իրաւունքի՛ ես ձեզի հետ ես: Վտասի ըլլանք որ կրօնիկ, հայրենիքի, իրաւունքի և ստորնացումէ գերծ մնալու մեր քայլարին մէջ Աստուած մեզի հետ է և չլնեցնէ՛ մեր արիւնը. եթէ մեր մէկ մտաք նախտակի իսկ, ազգին մնացելու մտաք մեր յաջող սերունդները նկարարութիւն կը գտնեն հանգիստ և երջանիկ սպայելու, տէր՛ իրենց կրօնիկն, առնին ու տեղին, գիւղին ու հողին:

Կուի հետևանքով, Աստուած մի արագտէ, եթէ զրաջ կտաւարութեան մը հողը ապաստանել անհրաժեշտ դառնալ, որիւն կառավարութիւն պարտաւոր է ընդունելու քաղաքական գաղափարներ: Նամանակը, փրանսական և անգլիական կառավարութիւններուն պէս քաղաքակիրթ և իրենց արդարութեամբը անսարք եղանակը հայրենիքի համար կուղաններու մտաւորակոյս, յարգանք ալ կընձայնեն:

Սիրիի՛ եղբայր, եթէ հետևիք մեր խորհուրդներուն և յանձնարարութիւններուն, որոնք ազգին բարիքը և հայրենիքին պատուութիւնը տնեչացող սրտէ մը կը թեքադրին, վտահ եղէ՛ք որ երկիրը պիտի ազատի բնութեան, հակառակ պարագային՝ վտահ ըլլանք որ անպատիւ ու անարգ մահով մը պիտի մեռնինք: Աստուածն օգնութիւն և յաջողութիւն կը մաղթենք, սիրիի՛ հայրենակից:

*Միտիաթէն վերջին պահուն առնած տեղեկութեանց համաձայն, նաև այդ շրջանը գլխաւորական պաշարման տակ է առնուած: Մասունէն ստացուած ստորոգ տեղեկութիւններ կան որ երկար ատենէ ի վեր ցեղապետներու մէջ տիրող դժուարութիւնը վերջ է դասած և արժէ իրենց ուժերը միացուցած են Ալի Եօնուս, Կէնուլի Մահմատ (Շէկօ աշիթթ), Ապտուլ Ակօր Կէն (Մուսկի աշիթթ) և Իչէթթ ալա (Նըյան աշիթթ):*

ՍՄԲԱՍ

### Ա Ջ Դ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ. Յ. Բիւրօն, քննելով Հ.Յ.Դ.Ար. Երուսաղիմի նախկին կեդր. Կամիստի գործունէութիւնը՝ որոշեց, ծանր հակակարգապահական յանցանքներու համար, կուսակցութեան շարքերէն արտաքսել Երուսաղիմի կազմի անդամներէն Աբօ Արոյեանը, Մեսրոպ Գուլումճեանը, Մկրտիչ Նրիցանցը, Լեւոն Մօզեանը եւ Վաղդէն Շուշանեանը: Այս որոշումը իր ժամանակին հրատարակութեան տրեցաւ կուսակցական թերթերուն մէջ:

Հակառակ ատոր, յիշեալ հինգ անձերը, կը շարունակեն իրենց գիրքնէ գիրքով ներկայացնել որպէս Հ.Յ.Դ.Ար. Եր. Կեդր. Կամիստ, այդ անունով կազմակերպական նամակներ ու շրջաբերականներ կը գրէին մարմիններուն, «Մարտկոց» անունով թերթ մը կը հրատարակէին, իբր Երուսաղիմի շրջանի կուսակցութեան արտայայ-

տութիւն. այդ թերթին մէջ, Հ.Յ.Դ.Ար. Եր. Կեդր. Կամ. -ի անունով յայտարարութիւններ կընեն եւ վերջապէս ամեն կերպ, կը ջանան ցոյց տալ, որպէս թէ իրենց համար արտաքսման վիճիւր գոյութիւն ունեցած չըլլայ:

Մի անգամ ընդմիջաւ, ամէն թիւրիմացութիւն փարատելու համար եւ առ ի գգուշութիւն, այսու անհրաժեշտ կը նկատենք յայտարարել, թէ՛ վերոյիշեալ հինգ անձերը արտաքսած ըլլալով Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն՝ անոնց կազմէ կատարած կամ ծրագրած կազմակերպական որեւէ քայլ կամ որ եւէ յայտարարութիւն կեղծիք է եւ հակակուսակցական, եւ անոնց հրատարակած «Մարտկոց» թերթը որեւէ անկուսութիւն չունի Հ. Յ. Դաշնակցութեան հետ:

Հ. Յ. Դ. - ԲԻՒՐՈ

### Օ. Ս. ՄԻՆՈՐ

Սեպտեմբեր 24ին, Փարիզի արւարձան Սիւրէնում, Դամասկոս հասակում, վարձանուէց Ռուս Սոցիալիստ-Եղափոխական կուսակցութեան ակնաւոր զործիչներէց՝ Օտպ Սուրճանովիչ Մինորը: Յուշարկաւորութիւնը կատարեց սեպտեմբեր 27ին, ընկերների և համակիրների ներկայութեամբ: Հ. Յ. Դաշնակցութեան կողմից ուղարկեց ջաւակցական հետազոտ և յուշարկաւորութեան՝ առանձին պատկերակոթիւն: Հանդուցեալը աչքառու գէմբ էր ոռու յեղափոխական շարժման մէջ և մօտիկ բարեկամ՝ Հ. Յ. Դաշնակցութեան: «Իրօտակ» յաշորը համարում կը տանք իր կենսագրականը:

### ԲՈՎԱՆԻԿԱԳՈՒԹԻՒՆ

«Դաշնակցութեան Օրը» (Խմբագրական) . . . . .	193
Հայ և Հայաստանցի (Աստուր) . . . . .	195
Տնտեսական նամակներ Պարսկաստանում. Արտաքին առևտուր (Յ. Հախնապարէան) . . . . .	199
Խորհրդային փոխառութիւնը (Գ. Սազեան) . . . . .	204
Այբուբենի բարենորոգումը Թիւրքիայում . . . . .	207
Թագրիչ շուրջ . . . . .	210
Կարմիր գծից ներս . . . . .	213
Մեր գանբը . . . . .	216
Լուրեր Երկրից . . . . .	221
Կեանքը Արեւիկեան Նահանգներում մէջ (Սըմբատ) . . . . .	222
Ազգարարութիւն (Հ. Յ. Դ. Բիւրօ) . . . . .	224
Օ. Ս. Մինոր . . . . .	224



Լ Ո Յ Ս : Տ Ե Ս Ա Ի

### Մ. ՎԵՐԱՆԴԵԱՆԻ

### Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հ Ա Տ Ո Ր Ա

Հիմնադրութենէն մինչեւ Օսմ. Սահմանադրութիւն  
( 1890 -- 1908թ. )

Շուրջ 500 մեծագիր էջ 80 պատկերներ

Գինը՝ Տրանսա, Սիւրիա, Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան՝ 40 ֆրանկ:  
Ուրիշ Երկրներ՝ 50 ֆր. կամ 2 դոլար: Կարելի է նախօրոք բաժանորդագրուել:  
Գինել «ԴՐՕՇԱԿ» ի հասցէով:



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանս.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէ՛

Rédaction «DROSCHAK»  
71, ave. Kléber. PARIS (16.)